

**ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ՝ ԲԱՔՎԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ռուսաստանի Արդարադատության նախարարության՝  
1895-1897 թվականների փաստաթղթերում\*

**Բանալի բառեր** – Ոստիկանության դեպարտամենտ, Արդարադատության նախարարություն, ՀՅԴ Բաքվի («Ոսկանապատի») կազմակերպություն, Քրիստափոր Միքայելյան, Քրիստափոր Կարա-Մուրզա, Նիկոլայ (Նիկողայոս) Ադոնց, 1896 թ. մայիսի 16-ի Բարձրագույն Մանիֆեստ:

Արխիվային նորահայտ վավերագրերի այս ծավալուն փաթեթը լույս է սփռում ՀՅ Դաշնակցության Բաքվի («Ոսկանապատի») կազմակերպության գործունեության լիովին անհայտ էջերի վրա:

«ՎԷՄ» հանդեսի 2023 թվականի վերջին համարում հրապարակվել են Ռուսաստանի Ոստիկանության դեպարտամենտի հանձնարարությամբ 1895 թ. աշնանը Բաքվի դաշնակցական գործիչների բնակարաններում իրականացված խուզարկությունների մասին վկայող փաստաթղթերը: Սակայն դրա հետևանքով սկիզբ առած ձերբակալությունների արդյունքում Ռուսաստանի Արդարադատության նախարարությունում «Ոսկանապատի» գործիչների հանդեպ սկսված մանրամասն հետաքննությանն առնչվող վավերագրերը մինչ օրս անհայտ են մնացել հետազոտողների համար: Այդ մասին խիստ սահմանափակ տեղեկատվություն է պահպանվել նաև ՀՅ Դաշնակցության պատմագրության մեջ: Հայտնի է միայն, որ Բաքվի գործիչների հետ ունեցած կապերի պատճառով կալանավորվածների թվում են եղել նաև Քր. Միքայելյանն ու Խաչատուր Մալումյանը (Ակնունի): Մինչև ժամանակ, հետաքննություն է իրականացվել ճանաչված երաժիշտ ու խմբավար Քրիստափոր Կարա-Մուրզայի, Պետեր-

\* Ընդունվել է տպագրության 30.06.2024:

ՎԷՄ համահայկական հանդես, ԺԶ (ԲԲ) տարի, թիվ 2 (86), ամբիլ-հունիս, 2024

բուրգում սովորող Նիկոլայ (Նիկողայոս) Ադոնցի և այլ գործիչների հանդեպ:

Հետաքննության արդյունքում հայտնաբերված փաստաթղթերի մեջ հատկապես մեծ թիվ են կազմում 1890-ական թվականների սկզբներին Ատրպատականում հաստատված առաջին դաշնակցական գործիչների ու Բաքվի («Ոսկանապատի») կազմակերպության սերտ կապերի մասին վկայող հարուստ վավերագրերը: Դրանք ցույց են տալիս, որ Թավրիզում հիմնված ՀՅԴ «Խարխախ» զինագործական արհեստանոցի գրեթե բոլոր աշխատակիցներն այցելել են Բաքու և հաճախ հենց «Ոսկանապատի» միջնորդությամբ են սերտ կապեր հաստատել ՀՅԴ այլ կառույցների հետ՝ առաջնորդվելով Թիֆլիսից **Քրիստափոր Միքայելյանի** կողմից տրվող ցուցմունքներով:

Ուշագրավ են հատկապես Բաքվում դրամական միջոցների հանգանակման համար զանազան միջոցառումներ կազմակերպելու և դրանք Թիֆլիս ու Թավրիզ ուղարկելու, ինչպես նաև Կ Պոլսի հայոց պատրիարք **Մատթեոս Իզմիրյանին** դրամ հասցնելու մասին վկայող նյութերը: Նման փաստերի հետ կապված հարուստ տեղեկատվությունը քողարկելու նպատակով հարցաքննության ենթարկված դաշնակցական գործիչները փորձել են իրենց քայլերը ներկայացնել իբրև մարդասիրական ձեռնարկներ՝ հիմնվելով այն փաստի վրա, որ կալանավորվածների շարքում էր նաև Կովկասի Հայոց բարեգործական ընկերության Բաքվի մասնաձյուղի ղեկավար դեմքերից Ֆրիդոն (Թադևոս) Մարդանյանը:

Թվում էր, թե սկիզբ առած հետաքննության մեծ ընդգրկումը, ինչպես նաև դրա արդյունքում հավաքված բավականին հարուստ տեղեկատվությունը հիմք էր դառնալու գործով անցնող հիմնական ամբաստանյալներին՝ ՀՅԴ «Ոսկանապատի» կազմակերպության ղեկավարներին՝ Ներսես Դավթյանին (Հրաշալի), Միքայել Զալյանին (բժիշկ Զալին), նրանց հետ սերտ կապերի մեջ գտնվող Ստեփան Տեր-Մկրտչյանին (Գագիկ) ու վերջինիս քրոջ ամուսնուն՝ Լևոն Թադևոսյանին (Պապաշա), ինչպես նաև անձամբ Քրիստափոր Միքայելյանին երկարատև բանտարկության դատապարտելու համար: Բայց դատաքննական գործընթացների արդյունքում ձերբակալվածների նկատմամբ ցուցաբերվեց համեմատաբար մեղմ վերաբերմունք, ինչն ամենևին էլ կապված չէր հայ հեղափոխականների՝ բարեգործներ ներկայանալու փորձի կամ այլ մեղմացուցիչ հանգամանքների հետ: Ռուսաստանի Արդարադատության նախարարության կողմից իրականացված հետաքննության նյութերում բազմիցս ընդգծվում էր, որ ձերբակալվածները «մտնում են գաղտնի ընկերության

մեջ, որը նպատակ ունի հայերին ապստամբության բարձրացնել թուրքական կառավարության դեմ»<sup>30</sup>:

Իրականում այս հետաքննությունը ծավալվում էր Ռուսաստանում տեղի ունեցող իշխանափոխության մթնոլորտում՝ կայսր Ալեքսանդր երրորդի մահվանը հաջորդած նոր ցար Նիկոլայ երկրորդի գահակալության առաջին տարիներին: Նիկոլայ երկրորդը գահին բարձրանալու մասին 1894 թ. հոկտեմբերի 21-ի իր առաջին Մանիֆեստով սուկ կատարել էր մահամերձ հոր վերջին խնդրանքը: Ուստի իրավիճակը կայունացնելու համար դրան հաջորդեց 1896 թվականի մայիսի 16-ի Բարձրագույն Մանիֆեստն ու լայն համաներումը, որից էլ օգտվեցին բազմաթիվ հեղափոխականներ, այդ թվում՝ կալանքի ու հետաքննության տակ գտնվող հայ ազատամարտի դաշնակցական ու հնչակյան գործիչները: Նրանց հանդեպ իրականացվող հետաքննությունը դադարեցնելու մասին որոշումներում հատուկ կերպով ընդգծվում էր կալանքից ազատվողների «ինտելիգենտ դասակարգին» պատկանելու փաստը: Նման վերաբերմունքի մասին են վկայում փաստաթղթերի ներկա փաթեթն ամփոփող վերջին երկու վավերագրերը:

Հրապարակվող բոլոր վավերագրերը տպագրվում են առաջին անգամ: Բնագրին հավատարիմ մնալու համար պահպանվել են անգամ ցարական պաշտոնյաների կողմից առանձին գործիչների ազգանունների ու զանազան տեղանունների մասնակի աղավաղումները՝ տողատակերում տալով համապատասխան բացատրություններ:

Գևորգ Ս. Խուդինյան  
Պապմ. գիր. դոկտոր

Մկրտիչ Դ. Դանիելյան  
Պապմ. գիր. թեկնածու

**Գևորգ Ս. Խուդինյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակում են հայոց նոր պատմության առանցքային հիմնահարցերը, այդ թվում՝ հայ ազգային-ազատագրական շարժման, Հայկական հարցի և Հայաստանի Հանրապետության պատմությունը: Հրապարակել է բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ հայ ազգային կուսակցությունների և, առաջին հերթին՝ ՀՅ Դաշնակցության պատմության ու գաղափարաբանության վերաբերյալ: Զբաղվում է նաև պատմության տեսության ու մեթոդաբանության հիմնախնդիրների հետազոտությամբ:

Էլ. հասցե՝ khoudinyan@yahoo.com

<sup>30</sup> Տե՛ս Վավերագիր N 2:

**Մկրտիչ Դ. Դանիելյան** – զբաղվում է 1870–1880–ական թթ. նարողնիկական շարժման, հայ ազգային նարողնիկության և ազգային կուսակցությունների պատմության հիմնահարցերով:

Էլ. հասցե՝ m.danielyan@mail.ru

## N 1

Գաղտնի  
9 դեկտեմբերի

2609

Ժամ. Գր.

### **Արդարադատության Մինիստրությանը կից հատուկ Քրեական գործերի Ժամանակավոր Գրասենյակ**

Ա. Մ.

Թիֆլիսի Դատական

Պալատի Դատախազի՝

Նորին Գերագանցության ընդունարան

1 դեկտեմբերի 1895 թ.

N<sup>o</sup> 581

ք. Թիֆլիս

Որպես լրացում Արդարադատության պ. Մինիստրին ուղղված այս տարվա նոյեմբերի 2-ի N 502 զեկուցագրին՝ ուղարկում եմ Բաքվի Մարզային Դատախազի տեղակալ Գորնովսկու՝ նոյեմբերի 15-ի և 17-ի NN 9 և 10 գրությունների պատճենները և պ Գորնովսկուն ուղղված իմ՝ նոյեմբերի 22-ի N 545 գրության պատճենը:

Պալատի Դատախազ (ստորագրությունը անընթեռնելի է):

Քարտուղար (ստորագրությունը անընթեռնելի է)<sup>31</sup>:

## N 2

### **Թիֆլիսի Դատական Պալատին ուղղված՝ Բաքվի Մարզային Դատա- րանի դատախազի՝ ըստ տեղամասի տեղակալի 1895 թվականի նոյեմբերի 15-ի N 9 գաղտնի գրության պատճենը**

Հենվելով գաղտնի տեղեկությունների վրա այն մասին, որ Թիֆլիսի «Կավկազ» թերթի խմբագրության աշխատակից Իոսիֆ Կիրակոսովը, Բաքու քաղաքում Արտուր Շուբերտի գրասենյակում աշխատող Սամսոն Հովակիմյանցը և գրասենյակի հաշվապահ Ա. Ի. Ադամովան, Բաքու քաղաքից՝ Ներ-

<sup>31</sup> Ռուսաստանի Դաշնության Պետական արխիվ, ֆ. 102, 3-րդ գործավարություն, ց. 1895 թ. գ. 79, թ. 30: Տե՛ս նաև Հայաստանի Ազգային արխիվ, Հավաքածու 8, ֆ. 102, 3-րդ գործավարություն, ց. 1895 թ. գ. 79, թ. 30:

սես Դավթյանցը մտնում են գաղտնի ընկերության մեջ, որը նպատակ ունի հայերին ապստամբության բարձրացնել թուրքական կառավարության դեմ, Բաքվի նահանգային ժանդարմական վարչության պետը պահպանությանը համապատասխանող կարգով այս անձնավորությունների մոտ կատարեց խուզարկություն: Անցած հոկտեմբերի 17-ին Թիֆլիս քաղաքում խուզարկություն էր կատարվել Իոսիֆ Կիրակոսովի մոտ: Խուզարկության ժամանակ հայտնաբերվեցին երկու նամակներ, որոնցից մեկը՝ ծրարի վրա «Բաքու, 12 հոկտեմբերի» կնիքով, իսկ ծրարի ներսում՝ մեկ այլ ծրար՝ «խնդրում եմ փոխանցել Քրիստափորին» գրությամբ: Եվ այս ծրարում հայերեն լեզվով նամակ՝ այսպիսի բովանդակությամբ. «Քրիստափոր, նամակ չեք գրում, պատճառները չգիտեմ: Պարոնը, որ վերջինն է ժամանել, գրեթե ոչ մի տեղեկություն չկարողացավ տալ տեղի մասին, որի վերաբերյալ դուք հանձնարարություն եք տվել, թվում է, թե նա ասաց՝ մոռացել է: Այստեղից երկու շաբաթ առաջ Իգմիրյանին<sup>32</sup> փոխանցվել է 1000 ռ., 500 ռ. այսօր նույնպես փոխանցեցինք, հետևաբար՝ 1500 ռ.: Եթե այս գումարի սակավության պատճառով հարմար եք գտնում, հաղորդեցեք Կոստանդինապոլիս՝ մարդկանց»: Երկրորդ նամակը Թավրիզից է՝ «Թիֆլիս, 15 հոկտեմբերի 1895 թվական»՝ փոստային կնիքով: Նամակը սկսվում է այսպես. «Ընկերներ, վերջապես չորրորդ օրն է այստեղ ենք: Բոլոր գործիքները և պաշարները ստացանք երեկ»: Այնուհետև նամակում պայմանական տերմիններով հաղորդվում են տեղեկություններ ինչ-որ ծանրոցների մասին: Նամակն ավարտվում է այսպես «Այստեղ ռուսական կոնսուլը հետևում է մեզ»: Նամակը ստորագրված է «Անհայտ»<sup>33</sup>: Այս նամակների կապակցությամբ սկզբում ըստ կարգի, ապա՝ քրեական օրենսգրքի 1025 հոդվածի համաձայն հարցաքննության ենթարկված Կիրակոսովը ցուցմունք տվեց, որ չգիտի, թե դրանք ում կողմից են գրվել և ինչու է իր անունով հասցեագրված:

Հոկտեմբերի 19-ին Ներսես Դավթյանցի մոտ խուզարկություն կատարելիս հայտնաբերվեցին բազմաթիվ նամակներ, փոստային անդորագրեր, բայց դրանց մեջ նրան վարկաբեկող ոչինչ չգտնվեց. Դավթյանցի մոտ խուզարկության օրը նա գտնվում էր Թիֆլիսում: Ամսի 23-ին նա ներկայացավ ժանդարմական վարչություն և հարցաքննվելով՝ ցուցմունք տվեց, որ Քրիստափորին փոխանցելու համար Կիրակոսովի մոտ հայտնաբերված նամակը գրել է ինքը: Բայց նա չցանկացավ բացատրել, թե ով է Քրիստափորը, ինչպես նաև ներկայացնել նամակի բովանդակությունը: Այս նույնը Դավթյանցը կրկնեց, երբ հարցաքննության ենթարկվեց Քրեական օրենսգրքի 1035 հոդվածի համաձայն:

<sup>32</sup> Կ. Պոլսի հայոց պատրիարքը:

<sup>33</sup> «Անհայտ»-ը «Անմեղի», այսինքն՝ Սևաբեցի Սաբոյի ծածկանվան սխալ թարգմանությունն է:

Հոկտեմբերի 19-ին Սամսոն Հովակիմյանցի մոտ խուզարկության ժամանակ հայտնաբերվեց հայերեն լեզվով նամակ, որի ծրարի վրա երկու անգամ ընդգծված կերպով գրված էր՝ «Սամսոն Հովակիմյանցին»: Ծրարի վրա կար «փոստային վագոն, 18 հոկտեմբերի 1895 թվական» կնիքը: Նամակի բովանդակությունն այսպիսին է. «Սիրելիս. տեղեկացրու պարոն Հրաշալիին<sup>34</sup>, որ այն երիտասարդը, որի անունով Հրաշալին գրել էր, երեկ պատահականորեն ձերբակալվել է: Հաշվի առնելով Պարսկաստանից ստացված նամակը-այլևս նրա հասցեով թող չգրեն»: Այնուհետև նամակում հանձնարարվում է հաղորդել բժիշկ Զալիևին, որ ռեալական ուսումնարանի 2-րդ դասարանի աշակերտ Լևոն Ներսիսյանը<sup>35</sup> ուսման համար վճարելու միջոցներ չունի և այդ պատճառով էլ հեղինակը խնդրում է Զալիևին՝ օգնել տղային: Նամակը ստորագրված է «Կ. Ռուբենյանց»: Հովակիմյանցը տեղեկացրեց, որ նամակը նոր է ստացել, չգիտի ում կողմից, բայց հասկանում է նրա բովանդակությունը, տեղյակ չէ, թե ով է Գրաշալին<sup>36</sup> և չի պատկերացնում, թե ինչու է նամակը հասցեագրված իրեն:

Այս նամակը հիմք տվեց խուզարկություն կատարելու բժիշկ Զալիևի մոտ: Ընդ որում՝ հոկտեմբերի 20-ի առավոտյան նրա մոտ հայտնաբերվեց Շեֆլեի «Սոցիալիզմի էությունը» գրքույկը, նամակներ և գրառումներ, 3 գրություն Դավթյանցից՝ հայերեն լեզվով:

Առաջինը գրված է 1894 թվականի հոկտեմբերի 18-ին, որում ասվում է, «Պ. Զալիև, այս գրությունը բերողին խնդրում եմ տալ Տարայանի նամակը, որը Ձեզ է տվել Աբելյանը: Եթե հարմար է, միացրեք ձեր ներդրումը: Մեր խորհրդակցությունը հետաձգվում է, հետաձգվում է և տեղեկությունների փոխանցման հետ կապված գործը - դա լավ չէ, հարկավոր է որոշում ընդունել և պատասխան տալ»: Զալիևն այդ նամակի կապակցությամբ ցուցմունք է տվել, որ Լայպցիգում, հարուստ հայերի միջոցներով, սովորել է ոմն Սեդրակ Տարայան: Վերջինս պատրաստել և գերմաներեն լեզվով հրատարակել է իր ատենախոսությունը հայկական արդյունաբերության մասին: Փողերը նրան ուղարկել էր Դավթյանցը, որին էլ Տարայանը դիմել էր՝ խնդրելով հավաքել գումար ատենախոսության հրատարակման համար, ինչպես նաև ուղարկել հայկական տնայնագործական արդյունաբերության հետ կապված նյութերը,

<sup>34</sup> «Հրաշալի»-ն Ներսես Դավթյանի ծածկանունն էր:

<sup>35</sup> Լևոն Ներսիսյան - թղթախտից մահացած հայ առաջին կին հեղափոխական Թամարա Ադամյանի և «Հայրենասերների միության» ղեկավար Դավիթ Ներսիսյանի որբ մնացած զավակը: Քրիստափոր Միքայելյանի («Կ. Ռուբենյանց») կողմից հայրական հոգածության արժանացած այս տաղանդավոր պատանին հետագայում դարձել է Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպի գլխավոր հերոսի նախատիպը:

<sup>36</sup> Գրաշալին նույն ինքը՝ Հրաշալիին է՝ ՀՅԴ Բաբվի կազմակերպության առանցքային դեմքը:

որոնք առկա են Բաքվում: Դավթյանը խնդրել է իրեն՝ Զալիևին, օժանդակություն ցույց տալ և նույնպես խնդրել է ինժեներ-տեխնոլոգ Ներսես Աբելյանին. երկտողը գրվել է հենց այդ կապակցությամբ: Զալիևի ցուցմունքները լիովին հաստատեցին Դավթյանը և Աբելյանը: Սեդրակ Տարայանը հաստատեց, որ ինքը իրոք դիմել է Դավթյանցին և ուրիշներին՝ նյութեր տրամադրելու և գումարով օգնելու խնդրանքով. Աբելյանից ստացել է նրա կողմից կազմված երկու գիրք՝ Շամսիսիի և մյուս գավառների գյուղացիության կենցաղի մասին:

Երկրորդ գրությունը 1894 թվականի նոյեմբերի 3-ից է: «Այսօր, պատգամավորների հարցի հետ կապված, կլինենք ձեր մոտ: Լինելու է նաև Աբելյանը: Կաճկաճյանցին տեղյակ չէն պահել: Եթե կարող եք՝ տեղեկացրեք: Մենք երկար չենք խոսի. կամ պետք է ուղարկենք պատգամավորներ, կամ էլ առաջարկենք թիֆլիսեցիներին՝ հույսները չդնեն մեր վրա և վարվեն այնպես, ինչպես իրենք գիտեն»: Զալիևը բացատրեց, որ անցած տարվա ձմռանը, նկատի ունենալով Թուրքիայում հայերի նկատմամբ հալածանքների մասին տեղեկությունները, հայ մտավորականության շրջանում հարց բարձրացվեց այն մասին, որպեսզի պատգամավորներ ուղարկեն ծայրագույն Կաթողիկոսի մոտ և խնդրեն վերջինիս՝ մեկնել Պետերբուրգ՝ ինքնակալ կայսեր մոտ՝ միջամտելու խնդրանքով: Այդ մասին էր գրում Դավթյանը իր երկտողում: Բայց Բաքվից պատգամավորներ չուղարկվեցին: Զալիևի այս բացատրությունը հաստատեցին Դավթյանը, Աբելյանը և ուրիշներ:

Երրորդ գրությունը 1895 թվականի ապրիլի 11-ից է. «Հարգելի բժիշկ, գրությունը բերողը Մանուկն է, որի մասին ես ասել եմ: Ես զբաղված եմ, խոսեք նրա հետ, հնարավոր է կես ժամից ես անցնեմ»: Զալիևը բացատրեց, որ Մանուկը Թուրքիայից եկած ինչ-որ հայ է, որը պատմում է թուրքական գազանությունների մասին: Դավթյանն այդ Մանուկին ուղարկել էր իր մոտ, քանի որ գիտեր, որ ինքը հետաքրքրվում է Թուրքիայի իրադարձություններով: Այդպիսի պարոններ Բաքու շատ են գալիս և նրանց մեծամասնությունը արկածախնդիրներ դուրս եկան: Դավթյանը ցուցմունք տվեց, որ ինքը չի հիշում, թե որ Մանուկի մասին է գրել:

Հովակիմյանցի մոտ բռնագրավված նամակի կապակցությամբ Զալիևը ցուցմունք տվեց, որ նամակի առաջին մասը իրեն հասկանալի չէ, իսկ երկրորդում խոսվում է երկկողմանի որբ Լևոն Ներսեսովի մասին – իր լավ ծանոթների զավակն է: Ով է նամակը ստորագրած Ռուբենյանը՝ նա չգիտի, հավասարապես չգիտի նաև թե ով է Հրաշալին: Այնուհետև նրա բնակարանում հայտնաբերվեցին Կարա-Մուրզայի այս տարվա մարտի 14-ի և սեպտեմբերի 28-ի գրությունները: Առաջինը վերաբերում էր Կարա-Մուրզայի համերգին, իսկ երկրորդում Կարա-Մուրզան խնդրում էր բժշկական օգնություն ցույց տալ ոմն Մուրադյանի: Հայտնաբերվեց ևս մեկ գրություն՝ առանց ստորա-

գրության, որում կար հրավերք՝ մասնակցելու 1894 թվականի նոյեմբերի 26-ին էլ. Սարկիսովայի տանը անցկացվող երեկոյթին: Գրության մեջ խմբիայլոց ասվում էր՝ «Մուտքի համար վճարը կամավոր է»: Գենջունցևի<sup>37</sup>, Ելիսավ. Սարկիսովայի, Մարի Վաչյանցի և մյուսների ցուցմունքներից երևում է, որ նրանցից առաջինը Սարկիսովայի տանը կազմակերպել էր երեկոյթ, որում գումարներ են հավաքվել Խարկովի տեխնոլոգիական ինստիտուտի ուսանող Լևոն Եղիազարովին ուղարկելու համար: Զալիևը այդ երեկոյթին ամենևին էլ չի եղել: Զալիևը իրեն մեղավոր ճանաչեց այն բանում, որ իր բնակարանում ուներ «Սոցիալիզմի էությունը» արգելված գրքույկը:

1895 թվականի հոկտեմբերի 24-ին, Բաքվի Ժանդարմական վարչության պետի հանձնարարությամբ, Թիֆլիսում, համաձայն կարգի, խուզարկություն կատարվեց «Նովոյե օբոզրենիե» թերթի սրբագրիչ Քրիստափոր Միքայելյանցի մոտ: Բռնագրավված գրությունների մեջ որևէ վարկաբեկող բան չկար: Բայց նա խոստովանեց, որ Հովակիմյանցից բռնագրավված նամակը գրվել է իր կողմից՝ երրորդ անձի հանձնարարությամբ, որը չի ցանկացել բացահայտվել, և նամակի առաջին մասի բովանդակության վերաբերյալ հրաժարվեց որևէ բացատրություն տալ, իսկ երկրորդ մասի հետ կապված ցուցմունք տվեց, որ խնդրել է տեղեկացնել Զալիևին Լևոն Ներսեսովի աղետալի վիճակի մասին, որի ծնողներին Զալիևը ճանաչում էր: Ինքն անձամբ Զալևին չէր գրել, քանի որ վատ էր ճանաչում նրան:

Շարադրված տվյալները հիմք հանդիսացան մեղադրանք առաջադրելու Ներսես Դավթյանցին, Սամսոն Հովակիմյանցին, Քրիստափոր Միքայելյանցին, Միքայել Զալիևին և Հովսեփ Կիրակոսովին Քրեական օրենսգրքի 320 հոդվածով, բայց նրանք բոլորը իրենց մեղավոր չճանաչեցին: Գործում չկա որևէ տեղեկություն՝ բացառությամբ գնդապետ ֆոն Ֆրենկի գաղտնի ու բանավոր հղումներից, որոնք վկայում են մեղադրյալների պատկանելությունը գաղտնի կուսակցությանը, որը ձգտում է հայերի ապստամբություն բարձրացնել Թուրքիայում: Շատ հնարավոր է, որ եթե այստեղ իրականացված հետաքննությունը միացվի այն հետաքննությանը, որն իրականացվում էր Թիֆլիսում՝ կբացահայտվի հանցավոր կազմակերպության հետ մեղադրյալների որևէ կապ, իսկ Բաքվում ինքնուրույն հետաքննության իրականացման պարագայում այս իմաստով հազիվ թե կարելի է սպասել որևէ արդյունքի:

Գործին կցված են խուզարկությունների ժամանակ բռնագրավված հայերեն լեզվով բազմաթիվ նամակներ և փաստաթղթեր: Սակայն դատել փաստաթղթերի բովանդակության մասին՝ անհնար է, քանի որ Ոստիկանության

<sup>37</sup> Գենջունցևը **Ենովք Գյունջյանն** է՝ ՀՅԴ հիմնադիր սերնդի հակասական գործիչներից մեկը:



Դեպարտամենտի հանձնարարությամբ գործողված թարգմանիչը մինչև հիմա չի ժամանել;

Վերը նշվածի մասին պատիվ ունեն զեկուցելու Ձերդ Գերագանցությանը այս նոյեմբերի 7-ի N 507 գրությամբ:

Բաքվի Մարզային Դատարանի Դատախազի տեղակալ Գորնովսկի  
Իսկականի հետ ձիշտ է

Թիֆլիսի Դատական Պալատի Դատախազի քարտուղար (ստորագրությունը անընթեռնելի է)<sup>38</sup> :

**N 3**

Ա.Մ. Պատճենը  
Թիֆլիսի Դատական  
Պալատի Դատախազ  
2 նոյեմբերի 1895 թ.  
N 545  
ք. Թիֆլիս

Գաղտնի

**Բաքվի Մարզային Դատարանի Դատախազի  
տեղակալ Գորնովսկուն**

Տեղեկացնում եմ Ձերդ Գերագանցությանը, որ ես շատ առումներով ոչ ամբողջական եմ համարում Ձեր այս տարվա նոյեմբերի 15-ի N 9 զեկույցը: Այսպես.

- 1) Նշելով, որ Դավթյանցի մոտ հայտնաբերվել են բազմաթիվ փոստային անդորագրեր, ժանդարմական վարչության պետի որոշման համաձայն՝ տարբեր քաղաքներ և արտասահման փող փոխանցելու վերաբերյալ, Դուք ավելացնում եք, որ դրանց մեջ նրան վարկաբեկող որևէ բան չի հայտնաբերվել: Սակայն արդեն այն, որ այդ անդորագրերը շատ են եղել, ցույց է տալիս Դավթյանցի առանձնահատուկ գործունեությունը՝ փող ուղարկելու հետ կապված: Այդ պատճառով էլ շատ կարևոր է մանրամասնորեն պարզել, թե ինչո՞վ կբացատրի Դավթյանը այս տարօրինակ հանգամանքը - նրա մոտ մեծ քանակությամբ փոստային դրամական փոխանցումների անդորագրերի առկայությունը ու որտեղ և ում ինչքա՞ն գումար ուղարկվել Դավթյանի կողմից: Կարևոր է նաև իմանալ, թե ինչով է բացատրել Դավթյանը իր մոտ գրենական պիտույքների մեծ պաշարի, հատկապես ծրար-

<sup>38</sup> Ռուսաստանի Դաշնության Պետական արխիվ, նույն տեղում, թթ. 31-33:

ների, ինչպես նաև մոտ 900 ռուբլու առկայությունը և որտեղի՞ց ու ինչո՞ւ համար է նա ստացել այն:

- 2) Ներկայացնելով Զալիևի բացատրությունները նրա մոտ գտնված Դավթյանի՝ 1894 թվականի հոկտեմբերի 18-ի գրության առաջին մասի վերաբերյալ, Դուք բոլորովին լռում եք այն մասին, թե ինչպես է բացատրել Զալիևը գրության երկրորդ և շատ հետքոքիր մասը, այն է՝ «Մեր խորհրդակցությունը հետաձգվում է, հետաձգվում է նաև տեղեկությունների ուղարկման գործը, – այդպես լավ չէ, հարկավոր է որոշում ընդունել և պատասխան տալ»:
- 3) Զալիևի մոտ հայտնաբերված Կարա–Մուրզայի այս տարվա մարտի 14-ի գրության մասին հակիրճ ասվում է, որ այն վերաբերում է Կարա–Մուրզայի համերգին: Մինչդեռ, դատելով ժանդարմական վարչության պետի՝ հոկտեմբերի 28-ի որոշումից, այդ գրության մեջ ասվում է. «Երեկ Տեր–Վաչյանցը նամակ գրեց, որպեսզի ձեզ ուղարկի հաշվի մնացած գումարը՝ 14 ռուբլի 24 կոպեկը, որը դրոշմանիշի համար է, երեկոյան կգամ»: Ընդունելով, որ այդ փողերը ստացվել են Կարա–Մուրզայի համերգից, անհասկանալի է, թե ինչ առնչություն ունեն դրանց հետ Տեր–Վաչյանցը և Զալիևը և ինչո՞ւ պետք է այդ փողերը մուտք գործելին Զալիևի մոտ:
- 4) Ներկայացված զեկուցման մեջ ամենևին էլ չեն հիշատակվում ժանդարմական վարչության պետի՝ հոկտեմբերի 28-ի որոշման մեջ նշված և Միքայելյանցի մոտ հայտնաբերված՝ Լավրուսևիչի հետ միասին պայմանական բնույթի գրագրությունները, արտասահմանից չորս նամակները, որոնց հեղինակներին նա հրաժարվեց նշել, ինչպես նաև այն երեք տարօրինակ ուղերձների բովանդակության մասին:
- 5) Նաև չի հիշատակվում այդ նույն որոշման մեջ նշված և Զալիևի մոտ հայտնաբերված Տեր–Գրիգորյանցի գրությունների մասին՝ «ընդունեք վճարողների այս կտորը», Կոչկաչանի՝ Ղզլարից և Մարդանյանցի<sup>39</sup>:
- 6) Չի հիշատակվում նաև գործին կցված Ասխաբատից՝ Բոգատիրյովի հեռագիրը ձերբակալվածների և Զալիևի մասին:

Առաջարկում եմ երեք օրվա ընթացքում նշված հարցերի վերաբերյալ ներկայացնել ամբողջական տեղեկություններ և այսուհետև նկատի ունենալ, որ անհրաժեշտ է լինել ավելի մանրակրկիտ՝ քաղաքական հանցագործությունների վերաբերյալ զեկույցներ ներկայացնելիս:

<sup>39</sup> **Կոչկաչանը** – վերը հիշատակված բժիշկ Կաճկաճյանն է, իսկ Մարդանյանցը՝ Կովկասի Հայ բարեգործական ընկերության ներկայացուցիչը:

Որպես բեկանում իմ պարտականությունները կատարողի նոյեմբերի 1-ի № 500 որոշման՝ Դուք կարող եք Ձեր զեկուցումները ինձ ներկայացնել դատարանի դատախազի միջոցով:

Բացի ներկա գրության կատարումից, ես կսպասեմ հետագա մանրամասն զեկույցներ հետաքննության ընթացքի և հանգամանքների վերաբերյալ:

Ստորագրություն՝ Պալատի Դատախազ՝ Սմիտոեն,

քարտուղար՝ իշխ. Արդուտինսկի-Դոլգորուկով:

Իսկականի հետ ձիշտ է.

Թիֆլիսի Դատական պալատի դատախազի քարտուղար Արդուտինսկի<sup>40</sup>:

N 4

Գաղտնի

**Բաքվի Մարզային Դատարանի Դատախազի տեղակալի՝ 1895  
թվականի նոյեմբերի 27-ի N 10 գրության պատճենը նույն  
դատարանի պարոն Դատախազին**

Ի պատասխան Թիֆլիսի Դատական պալատի պարոն դատախազի՝ այս նոյեմբերի 22-ի գրության՝ պատիվ ունեմ տեղեկացնելու Ձերդ Բարեձնությանը.

- 1) Առայժմ ուսումնասիրվել են Դավթյանցից բռնագրավված ոչ բոլոր փաստաթղթերը: Ամեն օր Նահանգային ժանդարմական վարչությունում տեղի են ունենում վկաների հարցաքննությունները (առավոտյան ժամը 10-11-ից մինչև երեկոյան ժամը 5-ը), այնպես որ հնարավորություն չկար մանրամասն ուսումնասիրել բոլոր փաստաթղթերը: Նոյեմբերի 29-ից կսկսվի իրեղեն ապացույցների ուսումնասիրությունը, որն ավարտելուց և Դավթյանցին լրացուցիչ հարցաքննության ենթարկելուց հետո կներկայացվեն մանրամասն տեղեկություններ Դավթյանցից բռնագրավված փոստային անդորագրերի մասին: Դավթյանցի բնակարանում հայտնաբերված գրենական պիտույքները գործին չեն կցվել, բայց գնդապետ ֆոն Ֆրանկի հաստատմամբ առկա էր մի ամբողջ արկղ՝ լցված փոստային թղթերով ու ծրարներով: Այս կապակցությամբ մեղադրյալը չի հարցաքննվել, բայց հարց կտան

<sup>40</sup> Ռուսաստանի Դաշնության Պետական արխիվ, նույն տեղում, թթ. 34-35:

երկրորդ հարցաքննության ժամանակ: Խուզարկության ժամանակ հայտնաբերված 900 ռուբլու կապակցությամբ Դավթյանցը ցուցմունք տվեց, որ այդ փողերն իր սեփական խնայողությունն են, որ պահ էր տրված Իվան Դավիդովիչ Ադամովին<sup>41</sup>. ձեռքակալությունից ոչ շատ առաջ նա Ադամովից վերցրել էր փողերը՝ նպատակ ունենալով գնել նավթաբեր հողային տարածք: Այսօր հարցաքննված Ադամովը հաստատեց այդ ցուցմունքները:

- 2) 1894 թվականի հոկտեմբերի 18-ի Դավթյանցի նամակի երկրորդ հատվածի կապակցությամբ Զալիևը ցուցմունք տվեց, որ խորհրդակցությունը պետք է կայանար Թառայանի ատենախոսության համար նյութեր ուղարկելու առիթով<sup>42</sup>: Այդպիսի բացատրություն տրվել էր նաև Դավթյանցի կողմից:
- 3) Կարա-Մուրզայի<sup>43</sup> 1894 թվականի նոյեմբերի 14-ի երկտողը վերաբերվում էր Բաքվում Կարա-Մուրզայի տված համերգի հասույթին: Հասույթի մի մասը նախատեսվում էր ուղարկել Թիֆլիսի Ներսիսյան ձեռնարանի տեսուչին՝ Էջմիածնի ակադեմիայից վտարված աշակերտներին բաժանելու համար: Համերգի կազմակերպմանը մասնակցել են Զալիևը և տիկին Տեր-Վաչյանցը՝ Կարա-Մուրզայի հին ծանոթն ու աշակերտուհին: Վերջինս ցուցմունք տվեց, որ դրամարկըրը տնօրինում էր տիկին Տեր-Վաչյանցը, որին ինքը խնդրել էր փողերը փոխանցել Զալիևին, որը, ծանոթ լինելով ձեռնարանի տեսուչի հետ, այդ փողերը պետք է ուղարկեր Թիֆլիս, բայց տիկին Տեր-Վաչյանցը ինքն է ուղարկել փողերը Թիֆլիս՝ չփոխանցելով դրանք Զալիևին. նույնը հաստատեց Զալիևը: Մարիա Տեր-Վաչյանցը ցուցմունք տվեց, որ փողերը ուղարկված են ոչ թե իր, այլ Կարա-Մուրզայի կողմից, բայց այնուհետև «Մշակ» թերթում, չգիտես ինչու, այդ փողերի համար իրեն շնորհակալություն հայտարարվեց: Առայժմ «Մշակի» այդ համարը չի կցված գործին:
- 4) Միքայելյանցի ու Լավրուզևիչի գրագրության մասին կզեկուցվի այդ գրագրության մանրակրկիտ հետազոտությունից հետո: Դրան հպանցիկ նայելով՝ ես ոչ մի պայմանական բան չգտա:
- 5) Զալիևին հասցեագրված Տեր-Գրիգորյանցի նամակի կապակցությամբ («ընդունեք վճարողների այս կտորը»), Զալիևը ցուցմունք տվեց, որ ինքը չի հիշում, թե ինչ առիթով է այն գրվել: Վկա Տեր-Գրի-

<sup>41</sup> **Հովհաննես Ադամյանը** հայ առաջին կին-հեղափոխական Թամարա Ադամյանի հայրն էր:

<sup>42</sup> Սա հետաքննության ուշադրությունը ՀՅԴ-ից շեղելու նպատակով տրված կեղծ ցուցմունք է:

<sup>43</sup> **Կարա-Մուրզա Քրիստափոր** – երաժիշտ, խմբավար Շուշիում և Բաքվում:

գորյանցը ենթադրեց, որ հավանական է, ինքն է, Զալիևի բնակարանում թողնել է մի կտոր և խնդրել է փոխանցել: Կաշկաչևի<sup>44</sup> 1892 թվականի մայիսի 16-ի երկտողը գրվել է Բաքվի Տեխնիկական կոմիտեի քարտուղար Բոգդան (նա ինքը Աստվածատուր) Կաշկաչևի կողմից: Թե՛ Զալիևը և թե՛ Կաշկաչևը բացատրեցին, որ 1892 թ. Բաքու էին եկել Կոնստանդինապոլսի պատրիարքարանի պատգամավորներ վարդապետ Ներսեսը և Տիգրան Գումիդջեղանյանը<sup>45</sup>, կաթողիկոսի ընտրության կապակցությամբ: Կաշկաչևը պատգամավորներին հրավիրել էր թեյի, որպեսզի շնորհավորեր նոր կաթողիկոսի ընտրության կապակցությամբ: Հրավիրվել էին նաև ուսուցիչ Հայրապետ Ղուկասովը և տեխնիկ Ներսես Աբելյանը, բայց վերջինս չեկավ: Ղուկասյանը հաստատեց Զալիևի և Կաշկաչևի բացատրությունը: Մարդանյանի՝ հոկտեմբերի 29-ի գրությունը, ըստ Զալիևի ցուցմունքի, դա կապված էր Բաքվի Մարդասիրական ընկերության որբանոցի հետ, որի քարտուղարն էր Մարդանյանը, և այդ գրությամբ նրան հրավիրում էր մասնակցելու նիստին: Մարդանյանը առայժմ չի հարցաքննվել:

- 6) Ասխաբադից՝ Բոգատիրյովի հեռագրի կապակցությամբ Զալիևը ցուցմունք տվեց, որ Բոգատիրյովը ամուսնացած է իր հորեղբոր աղջկա հետ, ուստիև զարմանալի չէ, որ ազգականը, իմանալով իր ձերբակալման մասին, հեռագրով հարց է տվել: Ներսես Բոգատիրյովը բնակվում է Ասխաբադում և առայժմ չի հարցաքննվել:

Դատախազի տեղակալ Գորնովսկի:

Թիֆլիսի Դատական Պալատի Դատախազի քարտուղար (ստորագրությունը անընթեռնելի է)<sup>46</sup>

N 5

**Բաքվի Մարզային դատարանի դատախազի՝ 1895 թ. դեկտեմբերի 20-ի N 80 գաղտնի գրության պատճենը՝ Թիֆլիսի Դատական պալատի դատախազին**

Որպես իրականացում այս դեկտեմբերի 13-ի N 621 գրության՝ տեղեկացում են Ձերդ Գերազանցությանը, որ, ինչպես ինձ տեղեկացրեց դատախազի տեղակալ Գորնովսկին, խուզարկության ժամանակ Միքայել Զալիևի մոտ

<sup>44</sup> Բժիշկ **Կաճկաճյանի** դժվարին հնչեղություն ունեցող ազգանունն այս գործում բազմիցս աղավաղվել է ցարական պաշտոնյաների կողմից:

<sup>45</sup> Ազգանունն աղավաղված է:

<sup>46</sup> Ռուսաստանի Դաշնության Պետական արխիվ, նույն տեղում, թթ. 36-38:

գտնված հայերեն լեզվով ձեռագիրը թարգմանել են միայն այս դեկտեմբերի 18-ին:

Ձեռագիրը սկսվում է այսպես. «Վերջին շրջանում (1874 թ.) Գերմանական Ռայխստագում քննարկվում էր ամենաաղքատ գարեջրի գործարանների հարցը: Մինչդեռ ամենից կարևոր հարցը՝ սոցիալիստական պրոպագանդայի բովանդակության և նպատակի հարցը, անուշադրության է մատնվել ոչ միայն գործարար աշխարհի քաղաքացիների, այլև պետական կրթված կլանի կողմից»: Պարզվում է՝ ձեռագիրն այսպես է. «Սոցիալիզմի տնտեսական ծրագրի էությունը և ինտերնացիոնալ շարժման իրական նպատակը կարելի է ձևակերպել այսպես. մասնավոր կապիտալի (այսինքն՝ մասնավոր սպեկուլյատիվ միջոցների արտադրության) փոխարինումը կոլեկտիվ կապիտալով»:

Ձեռագրի այս հատվածը Շեֆլեի «Սոցիալիզմի էությունը»<sup>47</sup> ստեղծագործության երրորդ էջի առաջին տողերի բառացի թարգմանությունն է: Սրանից ելնելով՝ ենթադրում ենք, որ Շեֆլեի ստեղծագործության ձեռագրի սկզբի առաջին երկու էջերում հայկական տեքստը ռուսերեն բնագրի հետ շփոթել հնարավոր չէ, քանի որ Զալիևից բռնագրավված գրքում բացակայում են առաջին երկու էջերը: Հայտնի չէ նաև գիրքը Զալիևին է, թե մեկ ուրիշինը, քանի որ տարբեր ձեռագրերի համեմատությունը դեռևս իրականացված չէ:

Շեֆլեի նշված ստեղծագործության 128-րդ էջում մատիտով հայերեն գրված յոթ տողեր կան: Մատիտով գրվածները տեղ-տեղ ջնջված են, և դժվարությամբ հաջողվեց կատարել մոտավոր թարգմանությունը՝ հետևյալ բովանդակությամբ. «Ենթադրում եմ, որ կռիվը, որպես կռիվ, պետք է մնա, բայց կռիվ ձևը և առարկան պետք է փոխվեն, կռվի իրականացումը և կիրառումը կախված է մարդկային էության յուրահատկությունից, կամ էլ կլինի հարատև կռիվ»:

Զալիևը հայտարարեց, որ ձեռագիրը և 128-րդ էջում արված նշումները ինքը չի գրել, բայց թե ով է գրել՝ չգիտի:

Այս բոլորին Դատախազի Տեղակալն ավելացրեց, որ հետաքննության ընթացքի մասին մանրամասն տեղեկություններ կհաղորդվեն հայերեն գրված փաստաթղթերի թարգմանությունից հետո:

Թիֆլիսի Դատական Պալատի Դատախազի Քարտուղար՝  
(ստորագրությունը անընթեռնելի է)<sup>48</sup> :

<sup>47</sup> Ավստրիացի կատեղեք-սոցիալիստ **Ալբերտ Շեֆլեի** «Սոցիալիզմի էությունը» աշխատությունը ռուսերենով հրատարակել է Գ. Պլեխանովը՝ Ժնևում՝ 1881 թվականին, Պ. Լավրովի առաջաբանով որպես «Ռուսական սոցիալ-հեղափոխական գրադարան» մատենաշարի երկրորդ գիրք:

<sup>48</sup> Ռուսաստանի Դաշնության Պետական արխիվ, նույն տեղում, թթ. 51-52:

Ա. Մ. Ժամ Գր.  
Թիֆլիսի Դատական  
Պալատի Դատախազ  
5 հունվարի 1896 թ.  
N 9

ք. Թիֆլիս

**Արդարադատության մինիստրությանը կից  
հատուկ քրեական գործերի իրականացման  
ժամանակավոր գրասենյակին**

Հոկտեմբերի 27-ին ես ժամանեցի Բաքու դիտարկելու տեղական ժանդարմական վարչությունում հայկական գաղտնի ընկերության վերաբերյալ քրեական օրենսգրքի 1035 հոդվածին համապատասխան հետաքննությունը: Նշված հետաքննությունն ուսումնասիրելով՝ ես գտնում եմ, որ Բաքվի Օկրուգային դատարանի դատախազի տեղակալի նոյեմբերի 15-ի և 17-ի N N 9 և 10, ինչպես նաև Բաքվի Օկրուգային դատարանի դատախազի դեկտեմբերի 20-ի N 80 զեկույցների (պատճենները ուղարկված են ժամանակավոր գրասենյակ դեկտեմբերի 1-ի N 583 և հունվարի 3-ի N 5 գրություններով) փաստացի նյութը, որը ձեռք է բերվել հետաքննությամբ՝ նրա սկսվելուց մինչև դեկտեմբերի կեսերը, շարադրված է միանգամայն ճշգրտորեն և բավարար չափով ամբողջական է: Իմ կողմից ես անհրաժեշտ եմ համարում ընդհանրացնել. որ խուզարկության ժամանակ մեղադրյալ Միքայելյանցից բռնագրավված Լավրուսիչի հետ միասին նրա գրագրությունը, իմ կարծիքով, որևէ արժեքավոր բան չի պարունակում և գործի համար որևէ նշանակություն չունի, իսկ Դավթյանցից բռնագրավվել են 25 փոստային անդորագրեր. երկու անդորագրեր Բաքվից՝ Շուշի Հայրապետ Բոգդատևի անունով 1893 թ. օգոստոսին և սեպտեմբերին, յուրաքանչյուրում 40 ռ., երեք անդորագրեր Բաքվից՝ Թիֆլիս՝ Խաչատուր Մալումյանի<sup>49</sup> անունով, 1893 թ. մարտին, ապրիլին և մայիսին, 70, 60 և 50 ռուբլու, ութ անդորագիր Բաքվից՝ Տարայանի անունով 93 թ. նոյեմբերի 15-ից 64 թ. հուլիսը ընկած ժամանակահատվածում, ընդհանուրը 230 ռուբլու, որից 180 ռ. ուղարկվել է Թիֆլիս, իսկ մնացածը՝ Լայպցիգ, մեկ անդորագիր նույն Տարայանի անունով Սուրամիից՝ Վլադիկավկազ, 15 ռ և 11 անդորագիր Բաքվից՝ Մյունխեն՝ Սամսոն Զարիֆյանի անունով, 1894 թ. դեկտեմբերի 2-ից 1895 թ. հոկտեմբերի 4-ն

<sup>49</sup> Հնարավոր է, որ Խաչատուր Մալումյանին (Ակնունի) Բաքվից դրամական միջոցների առաքումը կապված էր ոչ թե ՀՅԴ-ի գործունեության, այլ «Մշակի» ֆինանսավորման հետ:

ընկած ժամանակահատվածում, յուրաքանչյուր ամիս՝ 511 ռ. ընդհանուր գումարով, 9 անգամ 40-ական ռուբլի, մեկ անգամ 360 ռ., (1895 թ. մայիսի 3-ին՝ 73 ռ. և մեկ անգամ՝ 1895 թ. հոկտեմբերի 4-ին՝ 78 ռուբլի: Այս անդորագրերի կապակցությամբ հարցաքննության ենթարկված Դավթյանցը հայտարարեց, որ Բոգդատևին՝ Շուշիից չի ձանաչում, նրան փողեր չի ուղարկել և ինչպես է իր՝ Դավթյանցի թղթերում հայտնվել Բոգդատևին փող ուղարկելու անդորագիրը, չի կարող բացատրել: Մալումյանը իր ծանոթն է, «Մշակ» թերթի աշխատակիցը, որին ինքը մի քանի անգամ Բաքվում այդ թերթը բաժանորդներից հավաքած փող է ուղարկել: Տարայանը նույնպես իր ծանոթն է, որը մեկնել ու ավարտել է իր ուսումը Լայպցիգում, բայց, քանի որ Տարայանը սեփական միջոցներ չունեի, նրան համակրող բաքվեցիներից մի քանիսը պարտավորվեցին ամեն ամիս յուրաքանչյուրը 5-ական ռ. ուղարկել, որը կազմեց 40-45 ռ. ամսական և որը ինքը՝ Դավթյանցը, ուղարկում էր Տարայանին:

Զարիֆյանցը սովորում էր Մյունխենում՝ Բաքվի առևտրական Քրիստափոր Թումանի հաշվին: Վերջինիս հանձնարարությամբ Դավթյանցը Զարիֆյանցին էր ուղարկում այն փողերը, որոնք ստանում էր Թումանից:

Դեկտեմբերի երկրորդ կեսին ավարտվել է մեղադրյալներից բռնագրավված հայերեն փաստաթղթերի թարգմանությունը: Ավակիմյանցի փաստաթղթերի մեջ գործի համար նշանակություն ունեցող են հետևյալ փաստաթղթերը,

1) Նամակ, որ սկսվում է ««սիրելի Ս»» (գրվելու ժամկետը և վայրը չի նշված) ստորագրությունը «Օս. և Գար.»<sup>50</sup>: Հեղինակը ի միջի այլոց գրում է. «մեկ ամիս առաջ ես գրեցի մի շարք նամակներ, որոնք մերոնց միջոցով ձեզ ուղարկեցի: Այդ նամակներով պետք է հետաքրքրվեին մեր բարենորոգիչները<sup>51</sup>» և այնուհետև՝ «երբ կգրեք, տեղեկացրեք ինչ վիճակում է մեր ընկերության հովանավորչությունը<sup>52</sup>: Ի՞նչ կա Ներսեսի<sup>53</sup> հավաքներից: Ի՞նչ հարցեր են մշակվում; Ինչպիսի՞ կարծիքի են մեր ընկերները բարենորոգչական գործի և իմ մասին; Ողջույններս հաղորդեք Ստեփանին<sup>54</sup>, Ներսեսին, Ֆրիդոնին<sup>55</sup>»: Ավակիմյանցը բացատրեց, որ

<sup>50</sup> Ամենայն հավանականությամբ՝ Հովսեփի և Կարո:

<sup>51</sup> Ցարական պաշտոնյաների թարգմանած փաստաթղթերում «բարենորոգիչներ» հասկացությամբ սովորաբար բնորոշվում էր «հեղափոխաններ» անվանումը:

<sup>52</sup> Նկատի ունի դրամական շրջանակի աշխատանքը:

<sup>53</sup> **Ներսես Դավթյան-Հրաշալի:**

<sup>54</sup> **Ստեփան Տեր-Մկրտչյան-Գագիկ:**

<sup>55</sup> **Ֆրիդոն (Թադևոս) Մարդանյան** – տնտեսագետ, Բաքվի նավթարդյունաբերության վերաբերյալ մի շարք հոդվածների հեղինակ, Կովկասի Հայ բարեգործական ընկերության Բաքվի մասնաճյուղի ազդեցիկ ղեմներից մեկը:



այս նամակը ստացվել է Պարսկաստանից՝ Արտեմ Զարգոռյանից<sup>56</sup>, ով նախկինում բնակվում էր Բաքվում, բայց մեկնել է Պարսկաստան 1894 թ.: «Ընկերների» անվան տակ նա նկատի ունի Ներսես Դավթյանցին, Ստեփան Տեր-Միկիրոսիյանցին և Ֆրիդոն Մարդասյանցին: Այս անձնավորությունները հետաքրքրվում էին թուրքահայերի օգնության գործով և հիմնել էին խմբակ՝ «Բարեգործական ընկերություն» անվանումով: Նրանց նիստերը տեղի էին ունենում Դավթյանցի բնակարանում.– թե էլ ուլքե՞ր են մասնակցել, ինքը՝ Ավակիմյանցը, չգիտի, անձամբ ինքը չի մասնակցել, այդ պատճառով էլ չի կարող ասել՝ հատկապես ինչ նպատակ ուներ ընկերությունը: Մեկնելով Պարսկաստան՝ Զարգոռյանցն ասաց, որ նամակ է գրելու իր՝ Ավակիմյանցի անունով, որպեսզի նա այն փոխանցի Դավթյանցին: Նա այդպես էլ վարվեց, բայց Դավթյանցը, կարդալուց հետո, նամակը վերադարձրեց իրեն:

2) Նամակ՝ «սիրելիս» դիմելաձևով «Սար<sup>57</sup>» ստորագրությամբ և նույնպես՝ առանց նշելու ժամանակը և տեղը: Հեղինակը գրում է Պարսկաստանում ճանապարհորդելու անհարմարությունների մասին և, որպես օրինակ, բերում է իր ճանապարհորդություններից մեկը, իսկ այնուհետև նամակի վերջում ասում է. «Ով իրեն նվիրաբերել է բարենորոգչական գործին, նա այս բոլոր ասվածի մասին պետք է իմանա...– Եթե մտադիր ես անպայման գալ, պատրաստվիր, գրիր ինձ և մենք կնտածենք մինչև գարուն, իսկ այնուհետև կտեսնենք՝ ինչպիսի անհրաժեշտություն կա: Եթե ցանկանում ես ծառայել գործին, փոխիր ապրելաձևդ, եղիր ուշադիր և ավելի շատ կարդա, քան թե պարիր: Թաիրին<sup>58</sup> ասա, որպեսզի այդտեղ սպասի: Ինչպես երևում է, հարցը բարդ է: Միկիրոսիչը շուտով կգա և ամեն ինչի մասին կպատմի: Այս նամակը փոխանցիր Ստ. Տ. Մկր»: Ըստ Ավակիմյանցի ցուցմունքի՝ այս նամակն ինքը ստացել է նույն Զարգոռյանցից: Իրոք, ինքը՝ Ավակիմյանցը, պատրաստվում էր մեկնել Պարսկաստան, բայց՝ բացառապես այնտեղ առևտուր անելու նպատակով: Թե ի՞նչ բարենորոգչական գործի մասին է խոսում Զարգոռյանցը՝ ինքը չի հասկանում: Նամակի վերջում Զարգոռյանցը խնդրում է փոխանցել Թաիրին, այսինքն՝ Մկրտիչ Թաիրյանցին, որպեսզի նա մնա այդտեղ, այսինքն՝ Բաքվում: Ինքը՝ Ավակիմյանցը, անձամբ է փոխանցել հանձնարարությունը Թաիրյանցին, բայց Թաիրյանցը մերժել է: Նամակում հիշատակված «Միկրոսիչը» դա պարսկական Սալմաստ քաղաքի բնակիչ Մկր-

<sup>56</sup> Արտեմ Զարգոռյանց – ՀՅԴ «Խարիսխ» զինագործական արհեստանոցի աշխատակից:

<sup>57</sup> Սա, անկասկած, Սևաբեցի Սաքոյի Սարգիս անվան հապավումն է:

<sup>58</sup> Թաիրյան Մկրտիչին:

տիչ Խաչատրյանն<sup>59</sup> է: Թե ինչ պետք է պատմեր Միկրտիչը, ինքը՝ Ավակիմյանցը, չգիտի և նրանից ոչինչ չի լսել: Այս նամակի մեջ կար կնքված ծրարով մեկ այլ նամակ, որը ինքը, Զագորյանցի խնդրանքի համաձայն, փոխանցել է Ստեփան Տեր-Մկրտչյանցին:

3) Նամակ՝ «հարգելի բարեկամ» դիմելաձևով, «Մարկ» ստորագրությամբ: Հեղինակը նամակը սկսում է նրանով, որ արդեն 6 ամիս է, ինչ ինքը հեռացել է Բաքվից և շատ բաների կարիք է զգում. բազմիցս նա դիմել է ընկերներին, բայց ոչ մեկից պատասխան չի ստացել, 26 անգամ խնդրել է ուղարկել անձնագիրը, որը շատ անհրաժեշտ է Պարսկաստանում, բայց այս խնդրանքը նույնպես չի կատարվել: Ընկերները նույնիսկ չեն հաղորդում ընկերության հավաքների հետ կապված որևէ տեղեկություն, նրա հաշվետվությունների մասին և այլն: Այնուհետև հեղինակը տեղեկացնում է, որ Ֆալջուկ<sup>60</sup> գյուղում կրպակ է բացել, որը կարող է ծառայել երկու նպատակների, «մեր նյութական դրության ապահովումը և լինի ապաստան մեր տղաների համար»: «Պապիկը<sup>61</sup> և մյուսները առողջ են... Մակարյանը<sup>62</sup> և Մարգուլյանը պարապում են, իսկ Միխոն<sup>63</sup> գտնվում է արհեստանոցում»: Նամակի երկրորդ կեսում հեղինակը գրում է, որ Սալմաստում ապրելը դժվար է, «դատարաններում հայերին ճնշում են», «Տերեկյան հարցը<sup>64</sup> բարդանում է: Կառավարությունը 300-400-անոց հեծելազոր է ուղարկել փախստականներին բռնելու համար»: Միաժամանակ հեղինակը մեղադրում է Սալմաստի բնակիչներին թուրքահայերի ճակատագրի նկատմամբ սառը վերաբերմունքի մեջ: Նամակի վերջում ասվում է, որ «այստեղ ստացել ենք N N 10-ը և 11-ը<sup>65</sup>» և որ «Մկրտիչը 15-20 օր հետո կլինի Բաքվում»: Ավակիմյանցը ցուցմունք տվեց, որ այս նամակը նույնպես Զարգորյանցից է, այն Բաքու է բերվել 1895 թվականի սկզբին՝ Մկրտիչ Խաչատրյանի կողմից, որը հիշատակվում է նամակում: Նամակը ստանալով և նրա բովանդակությունից ոչինչ չհասկանալով նա՝ Ավակիմյանցը, այն փոխանցել է Դավթյանցին, որը շուտով հետ վերադարձրեց նամակը:

4) Ֆալջուկից հոկտեմբերի 29-ին ուղարկված նամակ՝ «Ընկեր» դիմելաձևով՝ «Կար<sup>66</sup>». ստորագրությամբ. գործի համար նշանակություն ունի

<sup>59</sup> ՀՅԴ զինագործ:

<sup>60</sup> Փայաջուկ:

<sup>61</sup> Գաբրիել Պոպովյանց:

<sup>62</sup> Մարո Մակարյան:

<sup>63</sup> Զինագործ Մխիթար:

<sup>64</sup> Խոսքը Դերիկի վանքի վրա հարձակմանը հաջորդած իրադարձությունների մասին է:

<sup>65</sup> Խոսքը «Դրոշակի» թվերի մասին է:

<sup>66</sup> Կարո - Արիստակես Զորյան:

միայն վերջին մասը, որտեղ ասվում է. «Տեղեկացրեք մեզ, որ արջը խոցված է, գրեք, ինչ իրադարձություններ և հուզումներ կան, ինչ են անում ռուս հեղափոխականները և այլն»: Ավակիմյանցի խոսքերով՝ այդ նամակը Զարգոռյանցից է, որն իրեն է հասցվել նույն Մկրտիչ Խաչատրյանի կողմից և, ինչպես նախորդ անգամ, իր կողմից փոխանցվել է Դավթյանցին, բայց վերջինս վերադարձրել է: Նամակի բովանդակությունն իրեն՝ Ավակիմյանցին, անհասկանալի է:

5) Զենք պատկերող շրջանակով ձեռագիր, որի շրջանակի մեջտեղում՝ «Սասունին օգնություն» ստորագրություն: Ըստ բովանդակության՝ ձեռագիրն իրենից ներկայացնում է բարենորոգիչների օրգան «Դրոշակի» կոչը ռուսահայությանը: Ձեռագրի սկզբում հայերին մեղադրում են դեպի «տանջվող եղբայրները» սառը և անսիրտ վերաբերմունքի համար, ընդ որում, որպես օրինակ, բերվում է բուլղարների միակամությունը, իսկ այնուհետև նրանց կոչ է արվում օգնության ձեռք մեկնել թուրքահայերին և նրանց հետ միասին գնալ մահվան պայքարի: Ստորագրված է Մ. Շ. Պ.:

Ավակիմյանցը սկզբում ցուցմունք տվեց, որ այդ կոչը նույնպես ստացել է Խաչատրյանից, իսկ այնուհետև փոխեց իր ցուցմունքը և հայտարարեց, որ այն իրեն է տրվել 1895 թ. հունիսին կամ հուլիսին՝ Բաքվում, «Լիբավա» հյուրանոցում, իրեն անծանոթ մի մարդու կողմից, որը ներկայացավ որպես Սուրեն Վարդևարյան կամ Վարդանյան: Այդ Սուրենին նա այլևս որևէ տեղ չի հանդիպել: Չկարդալով ձեռագիրը՝ այն նետել է սեղանի վրա և ոչ ոքի ցույց չի տվել:

6) Նամակ՝ «թանկագին բարեկամ» դիմելաձևով և 18. X. 1894 թ. նշումով: Ստորագրված է «Ս. Ամիրզադյան»: Հեղինակը շնորհակալություն է հայտնում ստացված նամակի համար, որից պարզվում է, որ Բաքվում հետաքրքրվում և ոգևորվում են Թուրքիայում վերջին հաջող իրադարձություններով<sup>67</sup>: Հեղինակը նույնպես ուրախանում է, քանզի «ո՞ր հայը կարող է անտարբեր մնալ... Այս շարժումը շատ ոգևորող է... Ոգևորող է և այն, որ Եվրոպան իր ուշադրությունը դարձրեց այն ազգի վրա, որը գտնվում էր մոռացության մեջ»:

Թեպետ հեղինակն առանձնակի հույսեր չի տածում Եվրոպայի նկատմամբ, բայց բավական է համարում և այն, որ եվրոպացիները «ընդունեցին հայերի գոյությունն աշխարհում և ազատության ձգտելու նրանց ընդունակությունը»: Հետգրություն. «Ուղարկեք ինձ խոստացվածը – ջերմացրեք ինձ»: Ավակիմյանցը բացատրեց, որ այս նամակը Պերնատու գյուղի ուսուցիչ Ամիրզադյանցից է ստացել: Բաքվում, իրոք, հետաքրքրվում են Թուրքիայի իրադարձություններով, որոնց մասին ինքը՝ Ավակիմյանցը, հաղորդել է Ամիրզադյանցին:

<sup>67</sup> Խոսքը Բաքր Ալիի ցույցի մասին է:

Հետգրությունը վերաբերում է Ամիրգադյանցին սապոգներ ուղարկելու խոստմանը:

7) Նամակ՝ «Նիկոլայ» ստորագրությամբ: Հեղինակը գրում է, որ իր մոտ որևէ նոր բան չկա, միայն ուսանողները խնդրանք են ուղարկել Կաթողիկոսին, որպեսզի նա դիմի եվրոպական տերություններին: Ցանկանում էին նաև խնդրագիր ուղարկել լորդ Ռոզբերիին, բայց չհաջողվեց, այսինքն՝ մուկոլյան ուսանողները չհամաձայնվեցին: Նամակի վերջում ասվում է. «Գանձարկղի հաշվին ուսանողներից մեկը՝ տեխնոլոգը, մեկնում է Աթենք»:

Ըստ Ավակիմյանցի ցուցմունքի՝ այս նամակը ստացվել է պետերբուրգյան ուսանող Նիկոլայ Ադոնցից<sup>68</sup>: Թե ինչ գանձարկղի մասին է ասում Ադոնցը՝ Ավակիմյանցը չգիտի:

8) Երկտող հետևյալ բովանդակությամբ. «Պարոն Սամսոն<sup>69</sup>, գրքի վեց օրինակները ծախվել են 2 ռ. 20 կոպեկով, մնացել է չվաճառված չորս օրինակ: Շուտով կվաճառեն: Ստացեք 2 ռ. 20 կոպեկ գումարը 6 գրքերի համար: Արշակ Մուրադյանց»։ Ավակիմյանցը բացատրեց, որ Մուրադյանցը Բաքվում բնակվող իր ծանոթներից է. երկտողում հիշատակվող գրքերը կոչվում են «Վոսկուկներ»<sup>70</sup> և թույլատրված են գրաքննության կողմից: Այդ գրքի 25 օրինակները իրեն՝ Ավակիմյանցին վաճառելու համար տվել է Բախշի Գրիգորյանցը<sup>71</sup> ասելով, որ այս գրքերը ստացվել են Պետերբուրգից և հրատարակվել են պետերբուրգյան ուսանողների կողմից: Գրքի 15 օրինակներն Ավակիմյանցն ինքն է վաճառել, իսկ 10 օրինակները հանձնել է Մուրադյանցին: Այս գրքերն ինքը՝ Ավակիմյանցը, չի կարդացել, այդ պատճառով էլ բովանդակությունը չգիտի: Գրիգորյանցը չհաստատեց Ավակիմյանցի հղումն իր վրա՝ հայտարարելով, որ ինքը վաճառելու համար նրան «Վոսկուկներ» անունով գրքեր չի տվել:

9) Առաջին չորս նամակների բովանդակության հետ կապված հարցաքննության ենթարկված Դավթյանցը ցուցմունք տվեց, որ ինքը Արտեմ Զարգոբյանցի հետ փոքր – ինչ ծանոթ էր, երբ վերջինս ապրում էր Բաքվում: Նրա՝ Պարսկաստան մեկնելու մասին ինքը՝ Դավթյանցը, իմացել է Ավակիմյանցից: Իրեն ներկայացված նամակներն իր համար բոլորովին անհասկանալի են: Նրանցում հիշատակված Պապիկը հավանաբար Թավրիզի հայկական

<sup>68</sup> Ականավոր պատմաբան **Նիկողայոս Ադոնցը** այդ տարիներին սովորում էր Սանկտ Պետերբուրգում:

<sup>69</sup> **Պարոն Սամսոնը** թերևս Ստեփան Թադևոսյանն է՝ Քրիստավոր Միքայելյանի քրոջ կրտսեր որդին:

<sup>70</sup> Պետերբուրգի ուսանողները հրատարակել էին «Հայդուկներ» գրքույկը: Սա պարզ աղավաղում է:

<sup>71</sup> Թերևս սա քննիչների թույլ տված վրիպակ է, քանի որ Բախշի Գրիգորյանի փոխարեն հայտնի է Բարսեղ Գրիգորյանը:

ուսումնարանի տեսուչ Գաբրիել Պոպյանն<sup>72</sup> է, ով նախկինում ուսուցիչ էր Բաքվում: Մակարյանը և Մարգուլյանը այդ նույն ուսումնարանի ուսուցչուհիներն են, որոնց երկուսին էլ Դավթյանցը Բաքվից է ձանաչում, որտեղ նրանք զբաղվում էին մասնավոր դասերով: Նամակներից մեկում հիշատակվում է «Դերեկյան հարցի» մասին: Խոսքը հավանաբար գնում է Թուրքիայի և Պարսկաստանի սահմանում գտնվող վանքի մասին, որը ենթարկվել է քրդերի հարձակմանը:

Դավթյանցի բռնագրավված փաստաթղթերի մեջ էր, ի միջի այլոց, մի հայերեն գիրք՝ «Երկրագործությունը որպես ուղիղ ձանապարհ» վերնագրով՝ Սիմեոն Մանիկյանի ստեղծագործությունը: Գիրքը սկսվում է նախաբանով, որը նվիրված է «հայ երիտասարդությանը», որում հեղինակը, նշելով, որ հայ ազգի անցյալը և ներկյան ողբալի է, ապագայի հույսը շատ անորոշ ձևով կապում է պատանեկության հետ՝ ասելով միայն, որ ազգի ապագան «կախված է ձեզանից», ու վստահություն է հայտնում, որ պատանեկությունն իր սերունդներին կթողնի «պայծառ հիշողություններ»: Ստորագրված է «Սիմեոն Մանիկյան, 26-ը մարտի 1882 թվական»<sup>73</sup>: Գրքի տեքստը ամբողջ ծավալով ռուսերեն լեզվով չի թարգմանվել, առկա են միայն առանձին էջերի թարգմանություններ գրքի տարբեր հատվածներից, ընդ որում՝ առանց որևէ կապի: Այդ պատճառով էլ հնարավոր չէ որոշակի կարծիք հայտնել գրքի բովանդակության մասին, թեպետ նրա ուղղվածությունը, անկասկած, հեղափոխական է, քանի որ, որքան երևում է թարգմանված էջերից, հեղինակն, օրինակ, քարոզում է «ազատություն, հավասարություն և եղբայրություն» հայտնի սկզբունքն՝ ամենալայն ընդգրկումով, ընդհուպ մինչև հանրային սեփականությունը, դատապարտում է իր ժամանակակից բանվորների ու նրանց տերերի հարաբերությունները՝ նրանց անվանելով տնտեսական ստրուկներ: Արդյունքում, որպես գովելի օրինակ, ամբողջությամբ բերվում է Տվերի ազնվականության՝ 1882 թ. փետրվարի 2-ի խնդրագիրը, որի բովանդակությունը, ինչպես հայտնի է, բոլոր խավերի իրավունքների և պարտականությունների հավասարեցումն էր և իրենց ներկայացնող ընտրովի պատգամավորների համագումարը, բայց միաժամանակ հույս է հայտնվում, որ Ռուսաստանը կհամնի ազատության, և նրա հետ միասին անկախություն ձեռք կբերեն Լեհաստանը, Ֆինլանդիան, Մալոռուսիան, Վրաստանը և Հայաստանը...: Այս գրքի կապակցությամբ Դավթյանցը դեռևս չի հարցաքննվել:

Ավակիմյանցի մոտ Պարսկաստանից հայտնաբերված նամակները՝ կապված Բաքվում «Բարեգործական ընկերության» հիմնադրման մասին նրա

<sup>72</sup> Խոսքը **Պապիկոյի՝ Պոպովյանցի** մասին է:

<sup>73</sup> Խոսքը **Միքայել Նալբանդյանի՝ Սիմեոն Մանիկյան** ծածկանունի և նրա հայտնի աշխատության մասին է:

ցուցմունքների հետ, որոնց մեջ մտնում էին Ստեփան Տեր-Միկիիրոսիչյանը և Ֆրիդոն Մարդանյանը, առիթ դարձան նրանց մոտ նախնական խուզարկության համար և, բացի այդ, հետաքննության մեջ ներգրավվեց նաև Մկրտիչ Խաչատրյանը, որը հիշատակվում էր այդ նամակներում և դրանցից երկուսը Պարսկաստանից բերել էր Բաքու Զարգոռյանցից՝ Ավակիմյանցին: Խուզարկության ժամանակ Տեր-Միկիիրոսիչյանցի<sup>74</sup> մոտ հայտնաբերվեց ա) «Աստրախան, Միրզաբեկյանցի ծխախոտի խանութ, Խաչատուր Կոմարյանցին փոխանցելու համար» հասցեով ծրար, բ) Հին Հայաստանի քարտեզը եւ գրառումների գրքույկից թերթ՝ 1893/94 և 94/95 թվականների ընթացքում գումար ուղարկելու հաշվարկներով, ընդհանուր հաշվով՝ 562 ռ.:– Տեր-Միկիիրոսիչյանցն իրեն մեղավոր չճանաչեց՝ բացատրելով, որ որևէ հակաօրինական ընկերության չի պատկանում ու չի պատկանել և Պարսկաստանից չի ստացել հանձնարարություններ ոչ ուղղակիորեն, ոչ էլ՝ Ավակիմյանցի միջոցով:– Հին Հայաստանի քարտեզը նկարել է նրա աշակերտներից Քրիստափորյանը (Տեր-Միկիիրոսիչյանցը հայկական դպրոցի ուսուցիչ է) և այն օգտագործվել է իր՝ մեղադրյալի կողմից որպես օժանդակ միջոց աշխարհագրություն դասավանդելու համար: Գրառումների գրքույկի թերթի վրա նշված են այն փողերը, որ երկու տարվա ընթացքում ուղարկված են եղել իր՝ Տեր-Միկիիրոսիչյանցի կողմից իր հայրենակցին և ընկերոջը՝ Պետերբուրգի համալսարանի ուսանող Ռուբեն Մելիք-Մուսյանին՝ որպես օժանդակություն: Աստրախանյան հասցեով ծրարի կապակցությամբ Տեր-Միկիիրոսիչյանցը բացատրեց, որ մի անգամ, 1895 թվականի սեպտեմբերին, նրա մոտ ուսումնարան եկավ իրեն անծանոթ մի մարդ, ներկայանալով որպես Պետրոս Աղաֆոնյան, փոխանցեց կիսակնքված ծրարը՝ ասելով, որ նրանում թուրքահայերին օգնելու կոչ է: Այդ կոչի մեկ օրինակը նա խնդրեց իրեն՝ Տեր-Միկիիրոսիչյանցին, պահել իր մոտ, իսկ երկրորդ օրինակն ուղարկել Աստրախան՝ վերը նշված հասցեով: Աղաֆոնյանի գնալուց հետո ինքը՝ մեղադրյալը, այդ հանձնարարությունը կատարեց. իր մոտ թողնված օրինակը նա կարդաց և այնուհետև պատռեց: Կոչի մեջ ուղերձ է պարունակվում՝ օգնել թուրքահայերին բացառապես փողով:– Իր ցուցմունքներին Տեր-Միկիիրոսիչյանցը ավելացրեց, որ նույն 1895 թվականի սեպտեմբերին կամ հոկտեմբերին իրեն բերեցին փոստային ծանուցագիր «հասարակ ծանրոց» ստանալու վերաբերյալ: Երբ նա ներկայացավ փոստային գրասենյակ, պաշտոնյան հայտարարեց, որ ծրարում ինչ-որ կասկածելի բան կա և, իրոք, ծրարը բացելուց հետո նրա մեջ հայտնաբերվեց տպագիր արգելված հրատարակություն, բայց թե ինչպիսի՞, ինքը չգիտի, քանի որ այն անմիջապես բռնագրավվեց փոստում:

<sup>74</sup> Խոսքը **Ստեփան Տեր-Մկրտչյանի՝ Գագիկի** մասին է, որի ազգանունը կրկին վերածվել է Միկիիրոսիչյանցի:

Ֆրիդրիխ Մարդանյանի մոտ խուզարկության ժամանակ հայտնաբերված և գործին կցված փաստաթղթերից կարևոր են ա) Գոլովինի ռուսերեն լեզվով «Սոցիալիզմը որպես քաղաքական ուսմունք»<sup>75</sup> գիրքը, եւ բ) հայերեն լեզվով 1895 թ. հոկտեմբերի 31-ի նամակը՝ հասցեագրված Համբարձում Մելիքովին<sup>76</sup>։ Կոնստանտինապոլսի Հայոց պատրիարքից, որում տեղեկացվում է 2700 ֆրանկը ստանալու մասին և շնորհակալություն է հայտնվում գոհաբերության համար եւ ավելացվում է, որ այդ փողերը տրվել են Մուշ քաղաքի կոմիտեին «դժբախտ սասունցիներին» բաժանելու համար։- Մարդանյանը, իրեն մեղավոր չճանաչելով, հայտարարեց, որ Գոլովինի ստեղծագործությունը ինքը գնել է Թիֆլիսում՝ շուկայում։ Կոնստանդնուպոլից ստացված նամակի կապացույթյամբ Մարդանյանը դեռեւս չի հարցաքննվել։

Մկրտիչ Խաչատուրյանցի մոտ խուզարկություն կատարելիս բռնագրավվել են փաստաթղթեր հայերեն լեզվով, որոնցից գործի համար նշանակություն կարող են ունենալ չորս ձեռագրեր, որոնց պատճենները ներկայացվում են։ Խաչատուրյանցը, իրեն մեղավոր չճանաչելով՝ բացատրեց, որ ինքը պարսկահայատակ է, Սալմաստ քաղաքի բնակիչ, բայց 1883 թվականից սկսած գրեթե միշտ բնակվել է Անդրկովկասի սահմաններում, մինչև 1889 թվականը՝ Թիֆլիսում, իսկ այնուհետև՝ Բաքվում։ Պարսկաստան մեկնել է 1889 թվականին՝ մեկ տարով։ 1894 թվականին այնտեղ եղել է հունիսից մինչև նոյեմբեր, իսկ 1895 թվականին՝ ապրիլից մինչև նոյեմբեր։ Զարգորյանցին ճանաչում է Բաքվից և լսել է, որ նա մեկնել է Պարսկաստան, բայց ինքը այնտեղ նրան չի հանդիպել։ Նրանից որևէ նամակ Ավակիմյանցին չի բերել և իրեն ներկայացված Զարգորյանցի նամակների բովանդակությունը չգիտե, և դրանք իրեն անհասկանալի են։ Նրանից բռնագրավված փաստաթղթերը երկուսն են. 1894 թվականի հունվարի 24-ի նամակը՝ «Տիգրանին» դիմելաձևով և ձեռագիրը, որ սկսվում է «նորից վերադարձիր և շարունակիր քո ցանկությունը» բառերով, իրեն չի պատկանում և, ինչպես է հայտնվել իր մոտ՝ չի կարող բացատրել. նա դրանք օգտագործել է որպես սովորական թղթեր։ «Փոքրիկ տղան» բանաստեղծությունը գրել է ինքը՝ ուրիշի բառերից։ Այդ երգը<sup>77</sup> հաճախ են երգում հայերը։ Կապված «սիրելի Գրիգոր» դիմելաձևով նամակի բովանդակության հետ՝ Խաչատուրյանցը դեռեւս չի հարցաքննվել։

<sup>75</sup> Իրականում Կ. Գոլովինի 1892-ին Սանկտ Պետերբուրգում լույս տեսած գիրքն ունեցել է «Սոցիալիզմը որպես դրական ուսմունք» վերնագիրը։

<sup>76</sup> **Համբարձում Մելիքյան** – Բաքվի հայ ունևոր դասի այն եզակի ներկայացուցիչներից մեկը ով հսկայական աջակցություն է ցուցաբերել հայ ազատամարտին։ Մանավանդ մեծ էր նրա դերը «Պրո Արմենիայի» հրատարակության կազմակերպման գործում և Քրիստափոր Միքայելյանին դրամական միջոցներով ապահովելու առումով։

<sup>77</sup> Իրականում «Փոքրիկ տղան» Գյոթեի հայտնի բանաստեղծությունն էր։

Տեր-Միկիիրտիչյանցը պահվում է կալանքի տակ, իսկ Մարդանյանը և Խաչատուրյանցը գտնվում են ոստիկանության հատուկ հսկողության տակ, բայց դրա հետ միասին՝ Բաքվի նահանգային ժանդարմական Վարչության պետը, առաջնորդվելով Քրեական օրենսգրքի 1035-7 հոդվածի հավելվածով, խնդրեց իմ համաձայնությունը ձեռքակալել նաև այս վերջիններին: Իմ կողմից համաձայնությունը տրվեց և այսպիսով Մարդանյանը և Խաչատուրյանցը նույնպես կալանքի տակ կառնվեն:

Երբ իրականացվող հետաքննությունը խուզարկություն սկսեց Տեր-Միկիիրտչյանցի մոտ, պարզվեց, որ նա ապրում է նույն բնակարանում իր ընկերների՝ Նիկոլայ Մելիք-Տանիևի, Պողոս Օհանջանովի, Սերգեյ Վարդանյանցի հետ, իսկ խուզարկության նախորդ օրը Թիֆլիսից եկավ և այդ նույն բնակարանում իջևանեց Երվանդ Ղազարյանցը<sup>78</sup>: Խուզարկության ժամանակ բռնագրավվեցին փաստաթղթեր ոչ միայն Տեր-Միկիիրտիչյանցից, այլև նրա հետ համատեղ բնակվողներից: Ընդ որում, ուսումնասիրելով Վարդանյանցի և Ղազարյանցի փաստաթղթերը, հետաքննությունն իրականացնողը համոզվեց այդ անձանց՝ հայկական գաղտնի կազմակերպությանը պատկանելու մեջ: Վարդանյանցին և Ղազարյանցի որպես մեղադրյալներ հետաքննության մեջ ներգրավելու մասին դեկտեմբերի 13-ի որոշման պատճենը կցվում է գործին: Բայց դրա հետ միասին նաև անհրաժեշտ են գտնում հավելել, որ Ղազարյանցին հետաքննության մեջ ընդգրկելու մասին որոշման 3-րդ կետով Բաբաևի՝ Սարգիսովին հասցեագրված նամակը պարունակում է միայն Բաբաևի խնդրանքը՝ Բաքվում Ղազարյանցին տրամադրել ինչ-որ տեղ, իսկ տեղեկությունները, որոնք շարադրված են որոշման նույն հատվածի 4-րդ կետում, ձեռք են բերվել գործակալական եղանակով: Ընդունելով, որ որոշման մեջ շարադրված շարժառիթներն անբավարար են ոչ միայն Վարդանյանցին և Ղազարյանցին կալանքի տակ պահելու, այլ նույնիսկ նրանց՝ որպես մեղադրյալներ հետաքննության մեջ ընդգրկելու համար, ես չտվեցի իմ համաձայնությունն այս մեղադրյալների նկատմամբ կիրառել այն միջոցները, որ նախատեսված են քրեական օրենսգրքի 1035-7 հոդվածով և սա նկատի ունենալով կարգադրություն է արվել նրանց փոխանցել ոստիկանության հատուկ վերահսկողության տակ:

Մեղադրյալ Զալիևի փաստաթղթերի մեջ, բացի Բաքվի Մարզային Ռատախազի տեղակալ Գորնովսկու N N 9 և 10 զեկուցումներում թվարկված փաստաթղթերից, հայտնաբերվեցին. ա) ևս երկու երկտողեր՝ Ֆ. Մարդանյան ստորագրությամբ և նույն բովանդակությամբ, որը նշված է Գորնովսկու զե-

<sup>78</sup> Հայտնի է, որ **Երվանդ Ղազարյանց** ծածկանունի տակ թաքնվել է Հովսեփ Արղության-Իշխանը: Սակայն սա թերևս եղել է նաև ՀՅԴ տարբեր գործիչների կողմից օգտագործված կեղծ անձնագրի տվյալը, որից օգտվել է ոչ միայն Խանասարի Իշխանը:



կուցման մեջ, այսինքն՝ հրավեր՝ մասնակցելու Բարեգործական ընկերության նիստին, ք) նամակ Մերվից, որի թարգմանությունը կցված է, և գ) նամակ՝ «22 հուլիսի 1891 թ. Բարշալ» նշումով, «սիրելի Միքայել» դիմալաձևով և «քո Մարգար» ստորագրությամբ: Այս նամակում ուշադրություն են գրավում նրա երկու հատվածները՝ «ի՞նչ ես անում դու, բացի բժշկությունից՝ կապված ազգային գործերի հետ... ինչպիսի՞ կարծիք ունեն բաքվեցիները ազգային գործերի վերաբերյալ: Կա՞ այնտեղ ընկերություն: Դրա հետ կապված հետո կգրուցենք» և այնուհետև «պետք է ասեմ, որ շուշեցիները մեռած չեն և անտարբեր չեն իրենց դժբախտ ազգի նկատմամբ, բայց դրա մասին՝ հետո»:

Զալիկն այս փաստաթղթերի բովանդակության հետ կապված դեռևս չի հարցաքննվել, իսկ Ֆրիդոն Մարդանյանն իր ստորագրությունը կրող այս երեք երկտողերի հետ կապված ցուցմունք տվեց, որ Բաքվում գոյություն ունի Կայսր Ալեքսանդր II-ի անվան հայկական բարեգործական ընկերություն, որի հովանավորներից մեկը հանդիսանում էր Զալիկը, իսկ ինքը՝ Մարդանյանը, քարտուղարն էր: Իրանով է բացատրվում երեք երկտողերի բովանդակությունը, որոնցով նա Զալիկին հրավիրում էր մասնակցել բարեգործականի հոգաբարձուների նիստին: Ոստիկանության ձեռք բերած տեղեկությունների համաձայն՝ պարզվեց, որ այդպիսի բարեգործական գոյություն ունի 1888 թվականից, բայց առանց կառավարության թույլտվության, ու գործում է միայն Կաթողիկոսի թույլտվությամբ:

Բացի նշված բոլոր մեղադրյալներից, դեկտեմբերի 2-ին հետաքննության մեջ է ներգրավվել նաև Լազար Արիստակեսյանցը. նրան ներգրավվելու համար առիթ հանդիսացավ այն հանգամանքը, որ Թիֆլիսում իրականացվող հետաքննությամբ մեղադրյալ Խումարյանցի գրառումների գրքույկում գրված էր Արիստակեսյանցի հասցեն, իսկ հարցաքննության ժամանակ Խումարյանցը ցուցմունք տվեց, որ այդ հասցեն նրան տվել է Մարտիկյանցը հեղափոխական գրականություն ուղարկելու համար: Արիստակեսյանցը ցուցմունք տվեց, որ Խումարյանցին բոլորովին չի ճանաչում և ինչպես է նրա գրքույկում հայտնվել իր հասցեն՝ բացատրել չի կարող: Արիստակեսյանցին խուզարկելու ժամանակ հայտնաբերվեցին ձեռագրեր, որոնց թարգմանությունը ներկայացվում է, բայց նրանց բովանդակության հետ կապված վերջինս դեռևս չի հարցաքննվել: Արիստակեսյանցի կողմից դատական քննության ու պատասխանատվության կանչվելուց խուսափելը կանխելու համար նա հանձնվել է ոստիկանության հատուկ վերահսկողությանը:

Վերը շարադրվածի մասին պատիվ ունեմ տեղեկացնելու հատուկ քրեական գործերի իրականացման ժամանակավոր Գրասենյակին:

Դատական Պալատի Դատախազի պաշտոնակատար՝  
(ստորագրությունը անընթեռնելի է):

Քարտուղար՝ (ստորագրությունը անընթեռնելի է)<sup>79</sup>:

N 7

Պատձեն

### Որոշում

1895 թ. դեկտեմբերի 13-ին Բաքվում, ես՝ ժանդարմական առանձին կորպուսի պորուչիկ Ստեբլին Կամենսկիս, Բաքվի Մարզային դատարանի դատախազի տեղակալ Գորնովսկու հետ միասին, ուսումնասիրելով այս դեկտեմբերի 12-ի խուզարկությունների արդյունքները, գտնում ենք, որ խուզարկության համար հինք հանդիսացան այս դեկտեմբերի 11-ի որոշման հետևյալ փաստերը.

Ա. 1) Ստեփան Տեր-Միկիրտիչյանցը հարցաքննության ժամանակ ցուցմունք տվեց, որ այս տարվա նոյեմբերին, իրեն անծանոթ անձնավորությունից, որը ներկայանում էր որպես Պետրոս Աղաֆոնյան, ստացել է հայերեն լեզվով հեկտոգրաֆ կոչի երկու օրինակ, որից մեկը նա պետք է ուղարկեր Աստրախան՝ Միրզաբեկյանցի ծխախոտի խանութի հասցեով, Էջմիածնի ակադեմիայում Տեր-Միկիրտիչյանցի հետ նույն խուցում բնակված Խաչատուր Կամարյանցին փոխանցելու համար, որը և նա կատարել է:

2) Խուզարկության ժամանակ նրա մոտ հայտնաբերվեց ... ծրար՝ Աստրախան քաղաքի նշված հասցեով:

3) բռնագրավվել է 1895 թ. Սահակ Քրիստափորյանցի նկարած Հին Հայաստանի քարտեզը:

4) գրառումների գրքույկից թերթիկ, որում նշված են դրամական հաշիվներ, փողի փոխանցումներ 1893/94 և 1894/95 թթ. ժամանակահատվածում՝ մի քանի հարյուր ռուբլի ընդհանուր գումարով,

5) ազգակցական կապ մեղադրյալ Քրիստափոր Միքայելյանցի հետ, որի ազգականը՝ Լևոն Թադևոսյանը, ամուսնացած է Տեր-Միկիրտիչյանցի քրոջ հետ, ում նամակի բովանդակության մասին Միքայելյանցը հրաժարվեց բացատրություն տալ,

6) նա հանդիսանում է Բաքվում այն երկու անձնավորություններից մեկը, որի հետ Միքայելյանցը նամակագրական կապ ուներ,

7) խուզարկության օրը Ստեփան Տեր-Միկիրտիչյանցը գիշերել է մեղադրյալ Դավթյանցի կնոջ բնակարանում:

Բ. 1) Մարգիս Առաքելի Վարդանյանցը հայկական դպրոցի ուսուցիչ է, որը, Ստեփան Տեր-Միկիրտիչյանցի հետ համատեղ, ապրում է նույն բնակարանում:

<sup>79</sup> Ռուսաստանի Դաշնության Պետական արխիվ, նույն տեղում, թթ. 53-59:

2) Վարդանյանցի մոտ հայտնաբերվեցին ա) այս տարվա սեպտեմբերի 14-ի փոստային առաքման անդորագիր՝ Թիֆլիս՝ Քրիստափոր Միքայելյանցի անունով 10 ռուբլի ուղարկելու մասին, բ) ինչ- որ փողային գրառումներ գրքույկի մեջ, որոնցում, ի թիվս այլոց, նշված է՝ Քր. Միքայելյանցին՝ 5 ռ.: գ) Քր. Միքայելյանցի՝ Բաքու, Ասվադատուր<sup>80</sup> Գալստյանցի անունով սեւագիր գրություն՝ «երաշխավորում եմ Սարգիս Վարդանյանցին առաջին վականսիայի համար: Սպասում եմ պատասխանի: Միքայելյանց», դ) Քրիստափորի անունով նամակի սեւագրությունը, որում խոսվում է ինչ- որ թյուրիմացության մասին՝ մեր ընկերությունում:

3) Զբաղեցրած պաշտոնը նա ստացել է Միքայելյանցի երաշխավորությամբ, իսկ նախկինում, նույն Միքայելյանցի երաշխավորությամբ, ծառայում էր Ազուլիսի դպրոցում:

4) Հավանական է, որ նա հանդիսանում է այն երկրորդ անձնավորությունը, որի հետ Միքայելյանցը նամակագրական կապ ուներ Բաքվում:

5) Այս տարվա օգոստոսի 20-ի նամակ Արմավիրից՝ Թիֆլիս, Հայկական հրատարակչական ընկերություն, Սարգիս Վարդանյանցին՝ «Առաջարկում ենք ձեր թեկնածությունը: Պայմանները «Մշակ»-ում են: Դիմեք Պյատիգորսկի եպիսկոպոսին: Հովանավոր Սաֆարյանց»:

6) Հայկական հրատարակչական ընկերության գրությունը խոսում է մեղադրյալների միջև ինչ- որ կապերի մասին, քանի որ ա. Միքայել Զալիևի և Ներսես Դավթյանցի մոտ հայտնաբերվել են նույն հրատարակչության տպագրած գրքույկները՝ փողը հավաքելու նպատակով, բ. այդ հրատարակչության վարիչ Գալուստյանցի մոտ Թիֆլիսում իրականացվել է խուզարկություն, գ. Գալուստյանցի ազգանունը հանդիպում է Միքայելյանցի նամակագրության մեջ, որը հրաժարվեց որևէ բացատրություն տալ Գալուստյանցի անձնավորության վերաբերյալ:

Գ) 1) Բացի Ստ. Տեր-Միկիրոսիյանցի հետ երեք համատեղ բնակվողներից, նախորդ օրը Թիֆլիսից ժամանեց որևէ որոշակի զբաղմունք չունեցող Երվանդ Ղազարյանցը, որը, ինչպես պարզվում է, աշխատում է «Նովոյե օբոզրենիե»-ի խմբագրությունում:

2) Նա քիչ է ծանոթ նշված ուսուցիչների հետ:

3) Նա Թիֆլիսից նամակ ուներ Բաբևից՝ հասցեագրված Ելիզավետա Սարկիսովային, որի մոտ տեղի էր ունեցել բարեգործական երեկո 1894 թ. դեկտեմբերի 26-ին (նրա այցեքարտը Զալիևի մոտ էր):

4) Երվանդ Ղազարյանցը այն նույն Ղազարյանցն էր, որն անցած ամռանը Դերբենդում գտնվող իր եղբոր հետ և Բաբևի աջակցությամբ դրա-

<sup>80</sup> Թերևս՝ Ասովաձատուր:

մահավաք էր կազմակերպել իբրև թե Մուշից եկած աղքատ ընտանիքի օգտին:

5) Նա Թիֆլիսում հետաքննության մեջ ներգրավված Ղազար Ղազարյանցի եղբայրն է:

Դեկտեմբերի 11-ի որոշման տեղեկությունների հետ կապված ողջ շարադրանքը վկայում է նշված անձնավորությունների միջև ճշգրիտ ու փայլուն կապերի մասին՝ ինչպես իրար հետ, այնպես էլ՝ մեղադրյալներ Բրիստ. Միքայելյանցի, Ներսես Դավթյանցի և Սամսոն Ավակիմյանցի հետ, այդ պատճառով էլ այդ տվյալներն արդեն բավարար են բոլոր վերը հիշատակվածներին ընդգրկելու իրականացվող հետաքննության մեջ՝ որպես մեղադրյալներ, այդ պատճառով ուղարկում եմ Ձեզ:

1) Ստեփան Տեր-Միկիիրոսիջանցին, Սարգիս Վարդանյանին և Երվանդ Ղազարյանցին ընդգրկելու ներկա հետաքննության մեջ՝ որպես մեղադրյալներ և 2) խնդրելու Դատական Պալատի Դատախազին՝ քրեական օրենսգրքի 1035-7 հոդվածի հիման վրա պահել Բաքվի բանտային ամրոցում:

Իսկականի հետ ձիշտ է: Ժանդարմական կորպուսի պորուչիկ Ստերլին-Կամենսկի և դատախազի տեղակալ Գորնովսկի:

ձիշտ է: Թիֆլիսի Դատական Պալատի Դատախազի քարտուղար՝ (ստորագրությունը անընթեռնելի է)<sup>81</sup> :

Ն 8

Պատձեն

Մերվ, 20 հունվարի 1895 թ.

Մեծարգո բժիշկ  
Միքայել Հովսեփի Զայանցին  
Բաքու

Անդրկասայան մարզի Մերվ քաղաքի հայկական փոքրաթիվ համայնքը չջանկացավ անմասն մնալ ներկա հանգամանքներում, այդ պատճառով էլ հավաքել է 250 ռ և փոստով ուղարկել Ձեզ: Ստացման և օգտագործման մասին խնդրում ենք տեղեկացնել մեզանից որևէ մեկին:

Ասխաբադի հայ հոգևորական Խաչատուր Ֆանյանց

Մերվ քաղաքի համայնքից 1. Նիկոլայ Բագատուրյանց

<sup>81</sup> Ռուսաստանի Դաշնության Պետական արխիվ, նույն տեղում, թթ. 65-67:

- 2. Ղազար Ղազարյանց
- 3. Զելիֆագոր
- 4. Իվան Թարխանյան

ձիշտ է՝ Դատախազի Տեղակալի քարտուղար՝ (ստորագրությունը անընթեռնելի է)<sup>82</sup>:

**N 9**

Գաղտնի

2330

16 փետրվարի

Ժամ/ Գրաս.

Նորին Գերագանցություն  
պարոն Արդարադատության  
մինիստրին՝ ի գիտություն

Թիֆլիսի Դատական Պալատի Դատախազից

**Զեկույց**

Որպես լրացում այս տարվա հունվարի 5-ի N 9 զեկուցման՝ Ձերդ Գերագանցությանը ներկայացնում եմ տեղեկություններ հայկական գաղտնի ընկերության վերաբերյալ Բաքվի Նահանգային ժանդարմական վարչությունում իրականացվող հետքնության հետագա ընթացքի մասին:

Մեղադրյալ Միկիրտիչ Խաչատրյանցն այս տարվա հունվարի 3-ի երկրորդ հարցաքնության ժամանակ տվեց ավելի մանրամասն ցուցմունքներ՝ բացատրելով, որ Բաքվից Պարսկաստան ժամանելուց հետո՝ 1894 թ. ապրիլին, նրան հարկ եղավ լինել Ֆալջուկ<sup>83</sup> գյուղում: Այնտեղ նա գտավ այն կրպակը, որտեղ առևտուր էր անում Բաքվից իր ծանոթ Հարությունը (Զարգարյանցը) ումն Անպուլումի<sup>84</sup> հետ: Այս կրպակից ինքը՝ Միկիրտիչը, հաճախ էր տարբեր ապրանքներ վերցնում և այդպիսով հաճախ էր տեսնվում Հարությունի հետ, որը Պարսկաստանում իրեն ներկայացնում էր որպես Արո Հեքիմյան: - 1894 թ. Նոյեմբերին, երբ նա՝ մեղադրյալը, պատրաստվում էր մեկնել Բաքու, Հարությունը խնդրեց իրեն նամակ տանել Բաքվում բնակվող Սամսոն Ավակիմյանցին: Նամակը կնքված էր, այդ պատճառով էլ նրա բովանդակությունն ինքը չգիտի: Ժամանելով Էրիվան՝ նա նամակը գցեց փոս-

<sup>82</sup> Նույն տեղում, թ. 70:

<sup>83</sup> Փայաջուկ անվանումի կրկին աղավաղված տարբերակը:

<sup>84</sup> Աղավաղված անուն է:

ՎԷՄ համահայկական հանդես, ԺԶ (ԲԲ) տարի, թիվ 2 (86), ապրիլ-հունիս, 2024

տարկդը, որպեսզի ավելի շուտ տեղ հասներ, քանի որ մտադիր էր կանգ առնել Թիֆլիսում: Զարգարյանցից Ավակիմյանցին հասցեագրված նամակը Խաչատրյանցին ներկայացնելիս՝ նա նորից հայտարարեց, որ նրա ընդհանուր բովանդակությունն իրեն բոլորովին ծանոթ չէ, և ինքը կարող է բացատրել միայն մեկ արտահայտություն՝ «Միկիրտիչը 15-20 օրից կլինի Բաքվում: Նա մանրամասն տեղեկություններ կհայտնի մեր մասին»: Պարսկաստանից վերադառնալիս Հարությունը խնդրել է իրեն՝ Ավակիմյանցին պատմել այն մասին, թե ինչպես է ինքը՝ Հարությունը, Նիկոլայ Հովհաննիսյանցի<sup>85</sup> և Թավրիզից ուսուցիչ Պապիկի հետ մեկնել «Դերիկի» վանք՝ Աստծուն աղոթելու, և այդ ժամանակ ինչպես են իրենց վրա հարձակվել քրդերը, բայց իրենք կարողացել են հեռ մղել<sup>86</sup>:

Պապիկն ասաց, որ պարսկական կառավարությանը տեղեկացրել են այն մասին, որ այդ վանքում պահվում են զենքեր, և կառուցված է ամրոց, բայց խուզարկության ժամանակ ոչինչ չի հայտնաբերվել: Պապիկին, որը Հարությունի հետ մեկնել էր վանք, մեղադրյալը ճանաչում էր Բաքվից, որտեղ նա ուսուցիչ էր, իսկ Հովհաննիսյանցի հետ նա ծանոթացել է Պարսկաստանում: Նամակներից մեկում հիշատակվող «Մխոյին» նա դարձյալ գիտեր Բաքվից, նրա հետ ծանոթացել էր Մարտիրոս Մելիք-Մարգարյանի մոտ: Միխոն մեկնել էր Պարսկաստան 1894 թ., այդ նույն ժամանակ այդտեղ էր մեկնել Մելիք-Մարգարյանը: Ինչ է նշանակում նամակներից մեկում «NN 10 և 11» նշումը՝ ինքը՝ Միկիրտիչը, տեղյակ չէ, բայց ենթադրում է, որ դրանք ինչ -որ թերթեր են, ինչպես, օրինակ, «Հնչակ»-ը, «Դրոշակ»-ը, «Արմենիա»-ն, որոնք Ռուսաստանում արգելված են, իսկ Պարսկաստանում միանգամայն ազատ կերպով են ստացվում:

Միկիրտիչ Խաչատրյանցին նրանից բռնագրավված «Տիգրան» և «Գրիգոր» բառերով սկսվող նամակները երկրորդ անգամ ներկայացնելու ժամանակ (դրանց պատճենները ներկայացված են հունվարի 5-ի N 9 զեկուցման մեջ), նա խոստովանեց, որ այդ նամակներն ինքն է գրել, առաջինը գրել է Բաքվից Թիֆլիս՝ իրեն անծանոթ Տիգրանի անունով՝ իր ծանոթ Մկրտիչ Թաիրյանցի խնդրանքով, որն այդ ժամանակ հիվանդ էր, ինչը երեւում է նամակից: Դա Տիգրանի այն նամակի պատասխանն էր, որում նա խորհուրդ էր տվել Թաիրյանցին՝ ստեղծել փոխօգնության դրամարկղ Բաքվի մասնավոր հաստատությունների ծառայողների համար, որոնք սահմանափակ վարձատրություն էին ստանում: Այդպիսի դրամարկղ, իրոք, հիմնվել էր 1894 թ., որի կազմակերպման մեջ մասնակցություն ունեցան Թաիրյանցը, Ավակիմյանցը,

<sup>85</sup> Նիկոլ Դուման:

<sup>86</sup> Այս կովի մասին տես **Խուդիյան Գևորգ**, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր., 2006, էջ 289

Բախշի Մելքոնյանցը, Արիստակեսովը, Հարություն Զարգարյանցը, ինքը՝ Միկիրտիչը և վերը հիշատակված Միխոն, որի ազգանունն իրեն հայտնի չէ: Նամակն ուղարկելով Տիգրանին՝ նա իր համար այն պատճենահանեց, որն էլ բռնագրավվեց խուզարկության ժամանակ, սակայն բռնագրավվեցին միայն 1-ին և 3-րդ էջերը, իսկ երկրորդը կորել էր: Այն ժամանակ, երբ ինքը՝ Միկիրտիչը, Թաիրյանցի բնակարանում գրում էր այդ նամակը, այնտեղ էին գտնվում Ավակիմյանը և Հարությունը (Զարգարյանցը): Գրիգորի անունով նամակն այն նամակի սևագիրն է, որ նա ուղարկել էր Բաքվից Պարսկաստան՝ իր ծանոթ ուսուցիչ Գրիգոր Ղազարյանցին: Այդ նամակում նա խնդում էր Գրիգորին՝ ձգտել զարգացնել Պարսկաստանի հայ պատանիներին՝ այդ առումով խարխլելով Սալմաստի դպրոցի հին ուսուցիչ Միկիրտիչ Ավետիսյանին<sup>87</sup>:

Վերահարցաքննված Սամոն Ավակիմյանցը ցուցմունք տվեց, որ, իրոք, Միկիրտիչ Թաիրյանցի և Միկիրտիչ Խաչատրյանցի առաջարկով ինքը և ևս մի քանիսը, թվով 10 հոգի, կազմեցին ընկերություն ու հավաքեցին 600 ռ., սակայն ոչ թե փոխադարձ օգնության համար, այլ նրա համար, որ մեկնեին Ելիզավետպոլի նահանգի Շուշիի գավառը, հողատարածք ձեռք բերեին և այդտեղ զբաղվեին ձիշտ գյուղատնտեսությամբ, բայց այդ առաջարկը չիրականացվեց: Այս գործին, բացի վերը նշվածներից, ցանկացան մասնակցել Բոգդան Մելքոնյանցը, Լազար Արիստակեսովը և Սողոմոն Գրիգորյանը, իսկ Հարություն Զարգարյանցը և Միխոն Իսայանցը<sup>88</sup>, որոնց նույնպես առաջարկեցին մասնակցել, հրաժարվեցին: Թե ով է Տիգրանը<sup>89</sup> Թիֆլիսից, նա՝ Ավակիմյանցը, չի իմանում և այն ժամանակ, երբ Խաչատրյանցը Թաիրյանցի բնակարանում նամակ էր գրում Տիգրանին, ինքը ներկա չի եղել: Տիգրանին նա չի ճանաչում, իսկ Թաիրյանցը հիվանդ է եղել, թե ոչ՝ իրեն հայտնի չէ: Կապված Պարսկաստանից՝ Զարգարյանցից ստացված նամակների հետ, Ավակիմյանցը կրկնեց նախորդ ցուցմունքները՝ նշելով, որ երկու նամակները նա ստացել է փոստով, իսկ մյուս երկուսը նրան է հանձնել Միկիրտիչ Խաչատրյանցը: Բոլոր նամակներն ինքը չի կարդացել, այլ փոխանցել է Դավթյանցին, այդ պատճառով էլ նրանց բովանդակության վերաբերյալ ոչինչ չի կարող հաղորդել:

Լազար Արիստակեսովը, Բաքվում դրամարկղի հիմնադրման հետ կապված, կրկնեց նույնը, ինչ որ Միկիրտիչ Խաչատրյանցը, այսինքն՝ դրամարկ-

<sup>87</sup> Խոսքը Արմենականների ձանաչված առաջնորդ **Մկրտիչ Ավետիսյանի (Թերլեմեզյանի)** մասին է: Նկատի ունի վերջինինս ազդեցության թուլացումը:

<sup>88</sup> ՀՅԴ գինագործ:

<sup>89</sup> Այստեղ քննիչի կողմից տեղեկատվություն է ձշտվում: Խոսքը Տիգրան Թաղևոսյանի մասին է, ով Արշակ Թաղևոսյանի (Լակլակ) հետ միասին իրականացնում էր Թիֆլիսի Բյուրոյի գործավարությունը:

ղի հիմնումը նպատակ ունեւ օգնելու նրա անդամներին, եթե նրանք դրա կարիքը զգային աշխատանքը կորցնելու, հիվանդության և այլ դեպքերում: Արիստակեսյանցի խոսքերով՝ դրամարկղի անդամների թվում էին այն անձնավորությունները, որոնց նշել էր Սամսոն Ավակիմյանցը՝ բացառությամբ Սողոմոն Գրիգորյանի և Միխո Իսայանցի: Վերջինիս Արիստակեսովը ճանաչում էր, նա աշխատում էր Բաքվում, Մանթաշևի գործարանում, 1894 թ. ամռանը մեկնել էր Պարսկաստան, իսկ մի փոքր ավելի վաղ, քան Իսայանցը, այնտեղ էր մեկնել Զագարյանցը: Այն բանից հետո, երբ Թաիրյանցի հիմնադրած ընկերությունը քայքայվեց, ինքը՝ Արիստակեսովը, լսել է, որ նրա նախկին անդամներից մի քանիսը պատրաստվում են մեկնել ինչ- որ տեղ՝ գյուղատնտեսությամբ զբաղվելու:

Որպես վկաներ հարցաքննված Բախշի Մելքունյանցը և Ռոման Գավրիլովը հաստատեցին մեղադրյալ Արիստակեսովի ցուցմունքները՝ ավելացնելով, որ իրենք երկուսն էլ եղել են ընկերության գանձապահները, սկզբում՝ Մելքունյանցը, ապա՝ Գավրիլովը: Գրիգորյանցը և Ակոպովը դրամարկղին չեն մասնակցել, իսկ Զարգարյանցը և Միխո Իսայանցը, 1894 թ ամռանը մեկնելով Պարսկաստան՝ դուրս են եկել դրամարկղից:

Գրիգորյանցը և Անդրիան Ակոպովը նշեցին, որ իրենք դրամարկղին չեն մասնակցել:

Այս տարվա հունվարին Բաքվի նահանգապետը Բաքվի Նահանգային Ժանդարմական Վարչության Պետին է ուղարկել գործակալական ճանապարհով ձեռք բերված, Թիֆլիսից Թավրիզ՝ Աբրահամ Մելիք-Աբրահամյանցին հասցեագրված ու Ե. Ղազարյանին փոխանցելու համար նախատեսված անընթեռնելի ստորագրությամբ՝ 1894 թ. մայիսի 16-ի նամակի թարգմանությունը, որից երևում է, որ նրա հեղինակը եղել է Բաքվում, որտեղ «պրոպագանդան հաջող է ընթանում: Բաքվեցիները դրամարկղից նրան հանձնել են 600 ռ. և, բացի այդ, Բաքվում գտնվել են չորս հոգի, որոնք ցանկություն են հայտնել մեկնելու Պարսկաստան, որոնցից մեկը Պապիկն էր»:

Ուսումնասիրելով վերը շարադրվածը՝ հետաքննությունն իրականացնողը գտավ, որ մեղադրյալներ Միկիրտիչ Խաչատուրյանցը և Սամսոն Ավակիմյանցը հակասության մեջ են ընկել Բաքվում հիմնված դրամարկղի նպատակների մասին իրենց ցուցմունքներում, որը հիմք է տալիս ենթադրելու, որ դրամարկղի նպատակը բոլորովին այլ էր՝ հավանաբար այն, որը նշվում է գործակալական ճանապարհով ձեռք բերված՝ 1894 թ. մայիսի 16-ին Թիֆլիսից ուղարկված նամակում: Այդպիսի ենթադրությունը հաստատվում է նաև նրանով, որ դրամարկղի անդամներից երկուսը՝ Հարություն Զարգարյանցը և Միխո Իսայանցը, Բաքվից Պարսկաստան են մեկնել 1894 թ. ամռանը, այսինքն՝ նրանից հետո, երբ Պարսկաստանից Բաքու է ժամանել գործակալը: Մոտավորապես այդ ժամանակ, ինչպես պարզվել է հետաքննությամբ,



Պարսկաստան մեկնեց նաև ուսուցիչ Գավրիլ Պոպովյանը, որը, անկասկած, մայիսի 16-ի նամակում հիշատակված «Պապիկն» է:

Անկախ դրանից, Ավակիմյանցի մոտ բռնագրավված Զարգարյանցի նամակներից երևում է, որ վերջինս մասնակցել է հայկական շարժմանը և այդ նպատակով մեկնել է Պարսկաստան: Այդ նամակներից երևում է, որ Միխայիլ Իսայանցը (Միխո) և Միկիրտիչ Թաիրյանցը (Թաիր) պատկանում են այդ նույն կազմակերպությանը, քանի որ նամակներից մեկում ասվում է. «Թաիրին ասա, որ մնա այնտեղ» և «Միխոն աշխատում է արհեստանոցում»: Նկատի ունենալով շարադրված դիտարկումները՝ հետաքննությունն իրականացնողը հունվարի 24-ին որոշեց. Միխայիլ Իսայանցին, Հարություն Զարգարյանցին, Միկիրտիչ Թաիրյանցին և Գավրիլ Պոպովյանցին ընդգրկել հետաքննության մեջ որպես մեղադրյալներ՝ համապատասխան քրեական օրենսգրքի 320 հոդվածի, ընդ որում Պարսկաստանում բնակվող Զարգարյանցին և Պոպովյանցին փնտրելու և ձերբակալելու համար խնդրել Ոստիկանության դեպարտամենտին:

Թաիրյանցը դեռևս չի հարցաքննվել, իսկ Միխայիլ Իսայանցը, իրեն մեղավոր չճանաչելով, ցուցմունք տվեց, որ Պարսկաստան է մեկնել սեփական նախաձեռնությամբ և այնտեղ զբաղվել է փականակագործությամբ՝ Թավրիզում բացելով սեփական արհեստանոցը: Մինչև Պարսկաստան մեկնելը մշտապես ապրել է Բաքվում, ընդ որում որևէ կազմակերպության չի անդամակցել, Բաքվում դրամարկղի հիմնադրման մասին ոչինչ չգիտի, չգիտի նաև այդ դրամարկղի մասնակիցներից ոչ մեկին:

Մեղադրյալ Իսայանցը հետաքննությունից ու դատական պատասխանատվության ենթարկվելուց խուսափելու համար կալանիքի տակ է առնվել Թիֆլիսում, որտեղից նա արտաքսվել է Պարսկաստան՝ Ներքին գործերի մինիստրության Ոստիկանության դեպարտամենտի կարգադրությամբ:

Մեղադրյալ Զալիևը հարցաքննվել է իրենից բռնագրավված նամակների բովանդակության հետ կապված՝ ա) նամակներ Մերվից (դրա թարգմանությունը ներկայացված է հունվարի 5-ի N 91 գեկուցման մեջ) և բ) 1891 թվականի հուլիսի 22-ի նամակը՝ «քո Մարգար» ստորագրությամբ (որի էությունը ներկայացված է նույն գեկուցման մեջ): Բացատրեց, որ փողերի առաքումը Մերվից, մի քանի անձանց ստորագրությամբ, ինքը հասկացել է այսպես. նամակի հեղինակները, ցանկանալով արտահայտել իրենց համակրանքը Թուրքիայում ճնշվող հայերի նկատմամբ, հավաքել են նամակում նշված գումարը և ընտրել են իրեն՝ Զալիևին՝ այդ փողերը ըստ նշանակության օգտագործելու համար: Ընտրությունը նրա վրա է կանգ առել հավանաբար այն պատճառով, որ նամակը ստորագրողներից Նիկոլայ Բագատուրովը նրա ազգականն է, իսկ մյուսը՝ հոգևորական Ֆանյանցը, նրա ծանոթն է: Նամակը ստանալով՝ նա գումարը բաժանել է Թուրքիայից եկած փախստականներին, որոնք Բաքվում շատ են ու հաճախ էին դիմում նրան՝ Զալիևին՝ շնորհիվ այն բանի, որ

նա բավականին հանրաճանաչ էր հայ ազգաբնակչության շրջանում: Մնացած անձնավորություններին, որոնք ստորագրել են նամակը, բացի Բագատուրովից և Ֆանյանցից, նա չի ճանաչում: «Քո Մարգար» ստորագրությամբ նամակը Զալիևը ստացել է Մարգար Միքայելի Արտեմովից<sup>90</sup>, իր դպրոցական ընկերոջից: Կուրսերն ավարտելուց հետո Արտեմովը ծառայում էր որպես բժիշկ ինչ –որ կազակական գնդում, իսկ ներկայումս բնակվում է Բաքվում: Նամակի այն արտահայտությունը, թե «Ինչ ես մտածում, բացի բժշկությունից՝ կապված ազգային գործերի հետ: Ինչ կարծիքի են բաքվեցիք ազգային գործերի վերաբերյալ: Կա՞ այդտեղ պատանեկություն»՝ Զալիևը համարում է որպես ուսանողական կյանքի ու ժամանակների զանազան ֆանտազիաների արձագանք: Նման հարցադրումը հանդիսանում է այն մարդու միանգամայն բնական հետաքրքրասիրության արդյունքը, որը հայտնվել է խուլ վայրում՝ Արաքսի ափին: «Պատանեկություն»<sup>91</sup> բառի տակ հայերը, սովորաբար, նկատի ունեն մտավորականությանը: «Շուշեցիները մեռած չեն և անտարբեր չեն իրենց դժբախտ ազգի նկատմամբ» արտահայտությունը Զալիևը չկարողացավ ստույգ բացատրել, բայց ենթադրեց, որ խոսքը, հավանաբար, գնում է թուրքահայերի մասին, որոնց ճակատագիրը միշտ հետաքրքրել է յուրաքանչյուր հայի:

Կոնստանտինապոլսի պատրիարքի՝ 1895 թ. հոկտեմբերի 31-ի՝ Համբարձում Մելիքովին հասցեագրված նամակի հետ կապված, որը բռնագրավվել է Ֆրիդոն Մարդանյանցի մոտ խուլարկության ժամանակ (նամակի էությունը շարադրված է հունվարի 5-ի N 9 զեկուցման մեջ), վերջինս բացատրեց, որ Համբարձում Մելիքովը, որը հանդիսանում է «Ե. և Ա. Մելիքովներ» առևտրական տան կառավարիչը, առևտրական տան միջոցներից Կոնստանտինապոլսի պատրիարք Իզմիրլյանին փոխանցել է 1000 ռ, ըստ փոխարժեքի՝ 2700 ֆրանկ՝ բարեգործական նպատակների համար: Որոշ ժամանակ անց Պատրիարքից ստացվեց շնորհակալական նամակ այդ նվիրատվության համար: Այդ նամակը պահվում էր Մարդանյանցի՝ առևտրական տան հաշվապահի դարակում և, ի թիվս այլ թղթերի, բռնագրավվել է խուլարկության ժամանակ:

Թիֆլիսի Դատական Պալատի Դատախազի պաշտոնակատար՝ (ստորագրությունը անընթեռնելի է):

8 փետրվարի 1896 թվականի<sup>92</sup>

<sup>90</sup> **Մարգար Արտեմյանը** Միքայել Զալյանի հետ միասին եղել է «Հայրենասերների միություն» անդամ:

<sup>91</sup> Սա, թերևս, լայնորեն գործածվող «ջահելություն» բառի անհաջող թարգմանությունն է:

<sup>92</sup> Ռուսաստանի Դաշնության Պետական արխիվ, նույն տեղում, թթ. 71-77:

№ 606

Ժամ. Գր.

Նորին Գերագանցություն պարոն  
Արդարադատության մինիստրին

Ներկայացնել Նորին Գերագանցությանը ընթերցելու համար  
Թիֆլիսի Դատական Պալատի Դատախազի Պաշտոնակատարից

Զեկույց

Որպես լրացում ժամանակավոր գրասենյակին ուղղված այս տարվա հունվարի 5-ի N 9 հաղորդագրությանը և փետրվարի 8-ի N 65 զեկուցմանը՝ ներկայացնում եմ Ձերդ Գերագանցությանը տեղեկություններ Բաքվի Նահանգային ժանդարմական վարչությունում իրականացվող հայկական գաղտնի ընկերության հետ կապված հետաքննության հետագա ընթացքի մասին: Մկրտիչ Թաիրյանցը, որի խնդրանքով մեղադրյալ Մկրտիչ Խաչատուրյանցը գրել էր խուզարկության ժամանակ իրենից բռնագրավված նամակը՝ հասցեագրված Թիֆլիս՝ «Տիգրանի» անունով (զեկուցում N 65), պարզվեց, որ 1895 թ. աշնանը մեկնել է Ժնև:

Մեղադրյալ Ստեփան Տեր-Միկիիրտիչյանի ցուցմունքները ստուգելու համար հեղափոխական թռուցիկ ուղարկվեց<sup>93</sup> Աստրախան՝ Խաչատուր Կամարյանցին՝ Միրզաբեկյանցի ծխախոտի խանութի միջոցով (տեղեկացված է ժամանակավոր Գրասենյակին N 9 գրությամբ): Հատուկ պահանջով՝ Աստրախանի Նահանգային ժանդարմական վարչության Պետի միջոցով խուզարկություններ իրականացվեցին Կամարյանցի և Միրզաբեկյանցի մոտ թե՛ խանութում և թե՛ բնակարանում, սակայն որևէ հանցավոր փաստ ո՛չ նրա մոտ, ո՛չ էլ մյուսի մոտ չհայտնաբերվեց: Որպես վկա հարցաքննված Միրզաբեկյանցը և գործակատար Մելքունյանցը ցուցմունք տվեցին, որ 1895 թվականի վերջերից սկսած խանութում փոստից ստացվել էր ծրար, որը բացելուց հետո նրա մեջ առկա էր ստորագրություն և առանց ստորագրության երկտող՝ ծրարը Խաչատուր Կամարյանցին փոխանցելու խնդրանքով: Վկաներին այդ անձնավորությունը բացարձակապես ծանոթ չէր, այդ պատճառով էլ նամակը մի քանի օր մնաց խանութում, բայց պատահաբար խանութ այցելած տեղի հայկական

<sup>93</sup> Սա ցարական ժանդարմների տարածված հնարքներից էր:

ՎԷՎ համահայկական հանդես, ԺԶ (ԲԲ) տարի, թիվ 2 (86), ամբիլ-հունիս, 2024

ուսումնարանի ուսուցիչ Սողվյովը խոսակցության ժամանակ հայտարարեց, որ ճանաչում է Կամարյանցին և հանձն առավ նրան փոխանցել նամակը:

Սողվյովը լիովին հաստատեց Միրզաբեկյանցի և Մելքունյանցի ցուցմունքները՝ ավելացնելով, որ նամակը, որի բովանդակությունն իրեն հայտնի չէր, փոխանցել է Կամարյանցին: Որպես վկա հարցված Աստրախանի հայկական ուսումնարանի ուսուցիչ Խաչատուր Արտեմի Կամարյանցը բացատրեց, որ նամակում առկա էր ռուսահայերին ուղղված կոչ՝ օգնության հասնելու թուրքահայերին: Թե ումից է նամակը – նա չգիտի: Աղաֆոնյանցն իրեն բոլորովին ծանոթ չէ, իսկ Ստեփան Տեր-Միկիրոսիցյանցի հետ ծանոթ է Էջմիածնի սկադեմիայից և վերջին անգամ նրան տեսել է 1895 թվականի ամռանը՝ Աստրախասում, որտեղ Տեր-Միկիրոսիցյանցը եկել էր իր գործերով:

Հետևելով Բաքվի Նահանգային ժանդարմական վարչության պետի հատուկ պահանջի իրականացմանը՝ Աստրախանի ժանդարմական վարչության պետը տեղեկացրեց, որ նկատի ունենալով, որ մի քանի հայեր, այդ թվում՝ Կամարյանցը, փոստով ստանում են «Հնչակ» և «Դրոշակ» հեղափոխական հրատարակությունները, 1895 թվականի ամռանը, հունիսի 12-ին, համաձայն 1881 թ. օգոստոսի 14-ի օրենքի, Կամարյանցի մոտ իրականացվեց խուզարկություն, որի ժամանակ հայտնաբերվեց հեկտոգրաֆ տպագրությամբ տետր՝ հետևյալ բովանդակությամբ. «Հայ հեղափոխական կոմիտեի 1895 թ. (տեղը չի նշվում) ընդհանուր նիստի մատյան Թուրքական կառավարությունից հայերի ազատագրության միջոցների մասին»: Կամարյանցը բացատրեց, որ այդ տետրը ինքը ստացել է փոստով՝ 1895 թ. մայիսի վերջին, բայց հատկապես որտեղից՝ ինքը չի հիշում, միայն տեղյակ է, որ այն արտասահմանից չէ, «Հնչակը» և «Դրոշակը» իրեն ուղարկել են նույնպես փոստով՝ Փարիզից, Ժնևից և Շտուտգարտից, բայց առանց իր որևէ նախաձեռնության:

Կամարյանցի բարոյական որակների և քաղաքական բարեհուսության աստիճանի վերաբերյալ ժողովրդական ուսումնարանների տեսուչը պատասխանեց Աստրախանի ժանդարմական վարչության պետին, որ Կամարյանցի քաղաքական անբարեհուսության մասին իր՝ տեսուչի մոտ տեղեկություններ չկան, բայց մի անգամ այցելելով հայկական ժողովրդական ուսումնարանը, ինքը դասարանում գտավ Հին Հայաստանի իշխաններին և թագավորներին թվարկող աղուսյակ՝ մինչև Հայկական թագավորության անկումը: Ի պատասխան տեսուչի հարցին՝ Կամարյանցն ասաց, որ այդ աղյուսակն ուսումնարանին է նվիրաբերվել Աստրախանի նախկին հայ եպիսկոպոս Սուրենյանցի<sup>94</sup> կողմից, և այն որպես օժանդակ ձեռնարկ է ծառայում Հայաստանի պատմության կուրսը անցնելու ժամանակ: Նկատի ունենալով, որ Հայաստանի պատմությունը չէր մտնում ժողովրդական ուսումնարաններում դասա-

<sup>94</sup> **Գևորգ Սուրենյանց** – հետագայում՝ Ամենայն Հայոց կաթողիկոս:

վանդվող ծրագրի մեջ, տեսուչը կարգադրեց դադարեցնել այդ առարկայի պարապմունքները և դասարանից հանել վերը նշված աղուսյակը:

Ուշադրություն դարձնելով Աստրախանի նահանգային ժանդարմական վարչության տեղեկությանը՝ մեղադրյալ Տեր-Միկիրոտիչյանցի՝ Կամարյանցի հետ նամակագրության փաստի վերաբերյալ և հեղափոխական կոչը, ընդ որում՝ երկրորդ ձեռքի միջոցով, բավարար չափով բացահայտում է Կամարյանցի պատկանելությունը հայկական ազգային կուսակցությանը, ես առաջարկեցի Բաքվի Նահանգային ժանդարմական վարչության պետին՝ ընդգրկել նրան հետաքննության մեջ որպես 320-րդ հոդվածով մեղադրյալ:

Թիֆլիսի Դատական Պալատի դատախազի պաշտոնակատար (ստորագրությունը անընթեռնելի է):

N 491

9 ապրիլի 1896 թվական<sup>95</sup>:

N 11

**ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**<sup>96</sup>

Ներքին Գործերի  
Նախարարություն

Ոստիկանության  
Դեպարտամենտ  
4-րդ գործավարություն  
14 դեկտեմբերի 1897 թ.

Արդարադատության մինիստրի հետ ներկայումս ձեռք բերված համաձայնությամբ՝ Կովկասյան երկրամասի ժանդարմական վարչություններում հայկական ազգային գաղտնի ընկերակցությունների գործով իրականացված հետաքննությունը ենթակա է դադարեցման 38 անձնավորությունների նկատմամբ 1896 թվականի մայիսի 16-ի Բարձրագույն Մանիֆեստի ուժով:

<sup>95</sup> Տե՛ս Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ, նույն տեղում, թթ. 77-79:

<sup>96</sup> Սա առանձին գործ է՝ Նիկոլայ երկրորդ ցարի գահակալության հետ կապված համաներման արժանացած անձանց անուն-ազգանունների մի քանի աղյուսակներով, որոնցից հրապարակում ենք միայն ՀՅԴ Բաքվի կազմակերպության ու նրա հետ կապված մտավորական գործիչների ցուցակը:

Երկուսի նկատմամբ դադարեցնել նախնական ձերբակալության հետ կապված պատիժը, իսկ 30 մեղադրյալների նկատմամբ՝ ապացույցների անբավարար լինելու պատճառով:

Նկատի ունենալով շարադրվածը և ուշադրություն դարձնելով այն բանին, որ ներկայիս հետաքննությամբ հաստատվել է Մոսկվայում հայկական խմբակի գոյությունը, որը համակրանքով վերաբերվելով հանցավոր ընկերակցությանը՝ նրան իր գործակցությունն է ցույց տվել թուրքահայերի համար Կովկասի սահմաններում զենք ձեռք բերելու և ուղարկելու, ինչպես նաև հայկական գործի համար նվիրատվություններ հավաքելու գործով, նպատակահարմար կլիներ արգելել բնակվել մայրաքաղաքներում և մայրաքաղաքային նահանգներում նշված մեղադրյալներից նրանց, որոնք իրենց սոցիալական դրությամբ կարող են հանցավոր քարոզչության նպատակով հայտնվել մայրաքաղաքներում: Սրանով ներկայացնելով այդպիսի 28 մեղադրյալների ցուցակը, որոնք հիմնականում պատկանում են ինտելիգենտ դասակարգին և հաճախ արդեն վարկաբեկվել են Մոսկվայից Կովկաս զենք տեղափոխելու գործով, Ոստիկանության Դեպարտամենտը խնդրում է Ձերդ Գերագանցության թույլտվությունը, ըստ Պետական Պահպանության պոլոժենիեի 1-18-րդ հոդվածների, երեք տարի ժամկետով արգելել նրանց՝ բնակվել մայրաքաղաքներում և մայրաքաղաքային նահանգներում:

Տնօրեն՝ (ստորագրությունը անընթեռնելի է)<sup>97</sup>:

N 12

**Ֆուցակ**

**Ինտելիգենտ դասակարգի մեջ մտնող մեղադրյալների, որոնց գործը դադարեցվել է Ամենաողորմած Մանիֆեստի հիման վրա:**

- 1) Դավթյան Ներսես Գրիգորի – քաղքենի, Ադամովի գրասենյակի հաշվապահ, սովորել է Ներսիսյան ձեմարանում, բնակվում էր Բաքվում:
- 2) Մարդանյանց Ֆրիդոն (Թադևոս) Ակիմի – ազնվական, հաշվապահ, ավարտել է Բաքվի ռեալական ուսումնարանը և Եավդրսկու կուրսերը՝ Մոսկվայում, բնակվում էր Բաքվում:
- 3) Միկիրտիչյանց – Տեր-Ստեպան Ֆադեյի – ուսուցիչ, գյուղացի, բնակվում էր Բաքու քաղաքում:

<sup>97</sup> Ռուսաստանի Դաշնության Պետական արխիվ, ֆ. 102, 7-րդ գործավարություն, ցուցակ 1895 թ., գ. 245, հատ. 2, թ. 69: Տե՛ս նաև Հայաստանի Ազգային արխիվ, Հավաքածու 8, ֆ. 102, 7-րդ գործավարություն, ցուցակ 1895 թ., գ. 245, հատ. 2, թ. 69:

- 4) Զալին Միխայիլ Օսիպովիչ– Բաքվի Քաղաքային վարչության բժիշկ, բնակվում էր Բաքվում:
- 5) Միքայելյանց Քրիստափոր Նիկիտիի– «Նովոյե օրոզրենիե»-ի սրբագրիչ, բնակվում էր Թիֆլիսում:
- 6) Խզնայանց Թադևոս Դավիդի – ուսուցիչ, ժամանել է Ալեքսանդրապոլից, ձերբակալվել է Բաքվում:
- 7) Գրիգորյանց – Տեր-Անտոն Ստեփանի – հոգևորականի որդի, ուսուցիչ՝ Բաքվում:
- 8) Մուսիյանց Իվան Ֆադեյի – վաճառականի որդի, առևտրական գործակալ, Երևան քաղաքի բնակիչ, բնակվում էր Մոսկվայում:
- 9) Միգդիսյան Ստեփան Գասպարի – վաճառականի որդի, Մոսկվայի համալսարանի ուսանող:
- 10) Մուրադյանց Մինաս Իվանի– բժիշկ, Մոսկվայի համալսարանի կլինիկայի արտահաստիքային օրդինատոր:
- 11) Թաթոսյանց Տիգրան Մատվեյի – բժիշկ, ավարտել է Մոսկվայի համալսարանը, բնակվում էր Թիֆլիսում:

### Ցուցակ

Ինտելիգենտ դասակարգի մեղադրյալների, որոնց գործը դադարեցվել է անբավարար ապացույցների պատճառով

12) Մնացականյանց (նա ինքը՝ Մնացականով) Գաբրիել Դուլիսանի – երդվյալ առենակալ, բնակվում էր Էրիվան քաղաքում<sup>98</sup> :

<sup>98</sup> Նույն տեղում, թ. 70: Վերը բերված ցուցակում բոլորը ՀՅԴ անդամներ են կամ համակիրներ: Ազգանունների աղավաղումներ գրեթե չկան, բացի ներկա հրապարակման մեջ բազմիցս կրկնվող՝ **Տեր- Միկիրոսիյանց-Տեր-Մկրտչյանից** (թիվ 3), **Միգդիսյան-Մուղդուսյանից** (թիվ 9) և **Թաթոսյանց-Թադևոսյանից** (թիվ 11)

## THE INVESTIGATION OF THE ACTIVITIES OF THE AR FEDERATION ORGANIZATION OF BAKU

According to the Documents of the Russian Ministry of Justice of 1895 – 1897

**Gevorg S. Khoudinyan**

*Doctor of Sciences in History*

**Mkrtich D. Danielyan**

*Candidate of Sciences in History*

**Key words** - Baku, police department, Ministry of Justice, the ARF organization of Baku ("Voskanapat"), Christapor Mikaelian, Kristapor Kara-Murza, Nikoghayos Adonts, the Supreme Manifesto of May 16, 1896.

In the last issue of 2023 of the "VEM" journal, we have already published documents testifying the searches carried out in the apartments of the ARF members of Baku by the order of the Police Department of Russia. However, as a consequence of those arrests, up to date the documents related to the detailed investigation of the officials of "Voskanapat" at the Ministry of Justice of Russia have remained unknown to researchers. Very limited information about this has been preserved in the historiography of the Armenian Revolutionary Federation. It is only known that Christapor Mikaelian and Khachatur Malumyan (Ankuni), who were in Tiflis, were among those detained due to their connections with the ARF officials of Baku. At the same time, an investigation was carried out against the well-known musician and group leader Kristapor Kara-Murza, Nikoghayos Adonts, who was studying in Petersburg, and other figures.

In terms of the content of the documents found as a result of the investigation, it is especially remarkable the abundant documents testifying the close ties between the first confederation figures established in Atrpatakan and Baku ("Voskanapat") in the early 1890s. The documents demonstrate that nearly all workers at the weapons workshop "Khariskh" of the ARF, situated in Tabriz, frequently traveled to Baku. Through "Voskanapat's" assistance, they forged strong connections with other ARF structures, following the guidance of Christapor Mikaelian from Tiflis.

It is especially noteworthy the materials testifying organizing various events for the collection of funds in Baku and sending them to Tiflis and Tabriz, as well as the delivery of money to the Armenian Patriarch of Constantinople, Mattheos Izmirlyan. In order to hide the rich information related to such facts, the interrogated ARF figures tried



to present their steps as humanitarian initiatives, based on the fact that one of the leaders of the Caucasus Armenian Benevolent Society's Baku branch, Fridon (Tadevos) Mardanyan, was also among those arrested.

It seemed that the widely launched investigation, as well as the rather rich information gathered as a result of it, would become the basis for sentencing to long imprisonment the main defendants in the case, the heads of the “Voskanapat” organization of the ARF, Nerses Davtyan (Hrazhali), Mikayel Zalyan (Dr. Zaliev), Stepan Ter-Mkrtchyan (Gagik), and his sister's husband Levon Tadevosyan (Papasha), who were in close contact with the leaders of the “Voskanapat” and Christapor Mikaelian too. But as a result of the judicial processes, relatively mild treatment was shown to the arrested, which was not at all related to the attempt of the Armenian revolutionaries to present themselves as benefactors or other extenuating circumstances. Since it was constantly emphasized in the materials of the investigation carried out by the Ministry of Justice of Russia that the arrested people “have entered into a secret organization, which aimed at raising Armenians to revolt against the Turkish government”.

In fact, this investigation was unfolding in the difficult atmosphere of the change of power taking place in Russia, in the first years of the reign of the new Tsar Nicholas II after the death of Emperor Alexander III. With the Manifesto of October 21 about the accession to the throne in 1894, Nicholas II actually just fulfilled the last request of his dying father. Therefore, in order to stabilize the situation, the Supreme Manifesto of May 16, 1896, was made, on the basis of which the broad amnesty was announced; many revolutionaries, including those ARF and Hnchak officials who were under arrest and investigation for the struggle for the freedom of Armenia, took advantage of it. In this regard, the fact of belonging to the "intelligent class" of those released from detention was specially emphasized. The last two documents summarizing the current package of the documents speak about such an attitude.

**РАССЛЕДОВАНИЕ ДЕЯТЕЛЬНОСТИ БАКИНСКОЙ  
ОРГАНИЗАЦИИ АРФ ДАШНАКЦУТЮН**

В документах Министерства юстиции России за 1895-1897 гг.

**Геворк С. Худинян**

*Доктор исторических наук*

**Мкртич Д. Даниелян**

*Кандидат исторических наук*

**Ключевые слова** - Баку, Департамент полиции, Министерство юстиции, Бакинская организация АРФ Дашнакцутюн («Восканапат»), Христофор Микаелян, Христофор Кара-Мурза, Николай Адонц, Высочайший Манифест от 16 мая 1896 г.

В последнем номере журнала «Вэм» за 2023 г. были опубликованы документы, свидетельствующие об обысках, проведенных по поручению Департамента полиции России в квартирах деятелей Бакинской организации АРФ осенью 1895 г. Однако документы, связанные с расследованием, начатым Министерством юстиции России в отношении деятелей «Восканапата» после их ареста, до сих пор остаются недоступными для исследователей. Крайне ограниченная информация об этом сохранилась также и в историографии АРФ Дашнакцутюн. Известно только, что из-за связи с бакинскими деятелями среди задержанных были также находящиеся в Тифлисе Х. Микаелян и Хачатур Малумян («Акхунни»). В то же время было проведено расследование в отношении известного музыканта и хормейстера Христофора Кара-Мурзы, обучающегося в Санкт-Петербурге студента Николая (Никогайоса) Адонца и других деятелей.

С точки зрения содержания документов, обнаруженных в результате расследования, особенно примечателен богатый документальный материал, свидетельствующий о тесных связях первых деятелей АРФ Дашнакцутюн, обосновавшихся в Атропатене в начале 1890-х гг., с Баку («Восканапат»). Они показывают, что почти все сотрудники оружейной мастерской «Харисх» («Якорь»), основанной АРФ Дашнакцутюн в Тавризе, посещали Баку и часто именно при

посредничестве организации «Восканат» устанавливали тесные связи с другими структурами АРФ Дашнакцутюн, руководствуясь указаниями, данными Христофором Микаеляном из Тифлиса.

Особого внимания заслуживают материалы, свидетельствующие об организации в Баку различных мероприятий по сбору средств и их отправке в Тифлис и Тавриз, а также о доставке денег армянскому патриарху Константинополья Маттеосу Измирлян. Чтобы скрыть связанную с подобными фактами важную информацию, допрашиваемые деятели АРФ Дашнакцутюн попытались представить свою деятельность как благотворительные мероприятия, основываясь на том факте, что в числе задержанных был также один из руководителей Бакинского филиала армянского благотворительного общества на Кавказе Фридон (Гадевос) Марданян.

Казалось бы, большой охват начавшегося расследования, а также собранная довольно богатая информация станут основой обвинения проходящих по делу главных руководителей организации «Восканат» АРФ Дашнакцутюн Нерсеса Давтяна («Грашали»), Микаэла Заляна («доктор Залиев»), Степана Тер-Мкртчяна («Гагик») и состоящего в тесных связях с последним, мужа его сестры Левона Тадевояна («Папаша»), а также лично Христофора Микаеляна, чтобы приговорить их к длительному тюремному заключению. Но в результате судебных процессов к арестованным отнеслись достаточно мягко, что никак не было связано с попыткой армянских революционеров представиться благотворителями или какими-либо другими смягчающими обстоятельствами, т.к. в материалах расследования, проведенного Министерством юстиции России, неоднократно подчеркивался тот факт, что задержанные «входят в тайное общество, целью которого является подстрекательство армян к восстанию против турецкого правительства».

На самом деле это расследование разворачивалось в сложной атмосфере смены власти в России после смерти императора Александра III, в первые годы правления нового царя Николая II. Николай II своим Манифестом о восшествии на престол от 21 октября в 1894 г. выполнил всего лишь последнюю волю своего отца. За этим последовал Высочайший Манифест от 16 мая 1896 г. и чтобы стабилизировать ситуацию была объявлена масштабная амнистия, которой воспользовались многие революционеры, в том числе находящиеся под арестом и следствием деятели армянской освободительной борьбы, - АРФ Дашнакцутюн и партии Гнчакян. В связи с этим особо подчеркивался факт принадлежности лиц, освобожденных из-под стражи, к «интеллигентному классу». О подобном отношении свидетельствуют последние два документа, обобщающие представленный пакет документов.

## Օգտագործված սկզբնաղբյուրներ և գրականություն

1. **Խուդինյան Գ.**, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերք), Եր., 2006:
2. **Ռուսաստանի Դաշնության Պետական Արխիվ**, ֆ. 102, 3-րդ գործավարություն, ցուցակ 1895 թ. գործ 79 , թ. 30:
3. **Ռուսաստանի Դաշնության Պետական արխիվ**, ֆ 102, 7-րդ գործավարություն, ցուցակ 1895 թ, գործ 245, հատ 2:

## REFERENCES

1. **Khoudinyan G.**, HY Dashnakts'ut'yan k'nnakan patmut'jun (akunqnerits' minch'ev 1895 t'vakani verjerè), Er., 2006 **(In Armenian)**.
2. Rusastani Dashnut'yan Petakan arxiv, f. 102, 3-rd gorts'avarut'yun, ts'uts'ak, 1895 t'. gorts 79, t'. 30 **(In Armenian)**
3. Rusastani Dashnut'yan Petakan arxiv, f. 102, 7-rd gorts'avarut'yun, ts'uts'ak, 1895 t', gorts 245, hat 2 **(In Armenian)**